

ՆԻՒ ԵՈՐՔ, 12 (ՌՈՅԹԸՐՁ).- Գնդացիքով պիսուած ճեղքակամորք մարդ մը երէկ կրակ բացաւ Նիւ Եորքի մէկ կաթոլիկ եկեղեցիին մէջ, սպաննելով վարդապետ մը եւ հաւատացեալ կին մը, հաղորդեց ոստիկանութիւնը, աւելցնելով, թէ ոչ մէկ մասնաւորապէս ինչի դէպքին մասին: Բացուած է հետաքննութիւն: Երկու հաւատացեալներ, որոնցմէ մէկը՝ հանգստեան կոչուած գաղտնի ոստիկան մը, յաջողած են գնդացիքը խլել ոճրագործէն, որ սակայն յաջողած է խոյս տալ:

ԼԻԲԱՆԱՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐՈՒ ԼԱՐՈՒՎՃՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍՐԻ ՀԵՏՁՀԵՏԷ

Լիբանանեւիսրայէլեան սահմանագիծին վրայ վերջին օրերու լարուածութիւնը սաստկացաւ երէկ՝ իսրայէլեան ռմբակոծումներու եւ իսրայէլեան սահմանէն ներս դէպքերու, ինչպէս նաեւ անոնց առնչութեամբ անճիղղ տեղեկութիւններու հաղորդումին պատճառով:

Արդարեւ, երէկ կէսօրէն ետք զինեալներ կրակ բացին Նաբուրայի մերձակայ Շլոմի իսրայէլեան բնակեցման վայրին մէջ օթովիւսի մը եւ այլ ինքնաշարժներու վրայ, պատճառելով վեց զոհ (ըստ կարգ մը աղբիւրներու՝ եօթը զոհ) եւ բազմաթիւ վիրաւորներ:

Իսրայէլացի բանրբը մը յայտարարեց, որ կապածներ կան, թէ զինեալները իսրայէլ թափանցած են Լիբանանէն:

Աւելի ուշ, իսրայէլեան բանակի բանրբը մը յայտարարեց, որ յարձակումը գործած երկու զինեալները երկու ժամ հետապնդուած են եւ իսրայէլեան ուժերու հետ հրացանաձգութեան ընթացքին սպաննուած են: Ան ըսաւ, որ «ցարդ չէ հաստատուած, թէ հիւսիսային իսրայէլի սահմանային պատը ճեղքուած է, եւ յայտնի չէ, թէ երկու զինեալները ուրկէ՞ եկած են»:

Իսրայէլեան բանակի աղբիւրներ նախապէս յայտարարած էին, որ վեց իսրայէլացիներ եւ երեք անձնասպանական քովմանտներ սպաննուած են դէպքին ընթացքին:

Լիբանանեան ապահովութեան աղբիւր մը անմիջապէս հակազդեց իսրայէլեան յայտարարութիւններուն, հրապարակելով յայտարարութիւն մը, որուն մէջ նկատել տուաւ, որ իսրայէլեան ձայնասփիւռին համաձայն՝ կրակ բացուած է իսրայէլեան օթովիւսի մը վրայ՝ Շլոմի բնակեցման վայրէն ներս, որ կը գտնուի Լիբանանեան սահմանին մօտ, Նաբուրայի դիմաց, եւ աւելցուցած է, որ կրակ բացուած է իրանեան հողատարածքէն: Այս տեղեկութիւնը ճիշդ չէ՝ փաստօրէն իսրայէլեան ուժերը կրակ բացած զինեալը կը հետապնդէ յիշեալ բնակեցման վայրէն ներս, եւ իրանեան հողատարածքէն ոչ մէկ հրացանաձգութիւն կատարուած է, հաւաստեց նոյն աղբիւրը:

Պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուի նոյնպէս հերքեց իսրայէլեան այն հաղորդումները, թէ օթովիւսին վրայ կրակ բացուած է Լիբանանէն, հաւաստելով, որ եթէ նման բան պատահած է, ապա անիկա կատարուած է իսրայէլեան սահմանէն ներս:

Հըրաուի նկատել տուաւ, որ ՄԱԿի խաղաղարար ուժերը ներկայութիւն են այդ շրջանէն ներս եւ ՄԱԿ պարտի ճշդել, թէ ուրկէ՞ կրակ բացուած է: Ան յայտնեց, որ այս առնչութեամբ հեռաձայնային խօսակցութիւն ունեցած է Ֆիլիպի Քրամանատար զօր-

Շար.Ղ՝ Էջ 10

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՅՅԷԼԵՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Երէկ առաւօտ, 12 Մարտ 2002ին, Արամ Ա. կաթոլիկոս Պապատայի նախագահական ապարանքին մէջ հանդիպում մը ունեցաւ Լիբանանի Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտի հետ:

Շուրջ ժամ մը տեւող հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանի քաղաքական ու տնտեսական կացութեան, ինչպէս նաեւ Լիբանանի հայութեան առնչուած հարցեր: Տեղական հարցերուն առընթեր, վեհափառ Հայրապետը նախագահը տեղեկ պահեց վերջին ամիսներուն միջին արեւելեան եւ եւրոպական շարք մը երկիրներ կատարած իր այցելութիւններուն եւ քաղաքական ու պետական հանդիպումներուն մասին:

Հանրապետութեան նախագահը, իր կարգին, ընդհանուր գիծերով ներկայացուց Լիբանանի ներքին կացութիւնը, ինչպէս նաեւ յառաջիկային Պէյրութի մէջ գումարուելիք Արարական Լիկայի ժողովին հետ առնչուող հարցերը:

ՊՎՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆԵՐԽՈՒԹԵՑ ՌԱՄԱԼԼԱ. 29 ՁՈՐ ԵՒ ՏԱՍՆԵԱԿՆԵՐՈՎ ՎԻՐԱԴՈՐ



Իսրայէլեան հրասայլեր՝ Ռամալլա ցերխուժման պահուն:

Պաղեստինեան շրջաններուն դէմ նոր յարձակումի մը ընթացքին, իսրայէլեան բանակը 29 պաղեստինցիներ սպաննեց եւ քանի մը տասնեակ վիրաւորներ պատճառեց աներիկացի պատւիրակ Անթրնի Չինիի այցելութեան նախօրեակին:

Պաղեստինցի պիսուածներ, իրենց կարգին, վեց իսրայէլացիներ սպաննեցին հիւսիսային իսրայէլի մէջ, ուր կրակ բացին օթովիւսի մը վրայ: Միջադէպը պատահեցաւ Լիբանանի սահմանին մօտ: Իսրայէլեան ապահովութեան ուժերու մէկ քանրբը յայտնեց, որ Շլոմի քաղաքին ձայնային վրայ պիսուածներ կրակ բացին անցնող ինքնաշարժներուն եւ օթովիւսներուն վրայ: Ապահովութեան ուժերը յաջողած են սպաննել երկու պիսուածներ: Ոստիկաններ կը

փնտռեն գործողութեան մեղսակցած այլ պիսուածներ: Դէտերմտահոգ են, որ պաղեստինեան ըմբուտութեան ալիքը սկսած է ծաւալիլ դէպի հիւսիսային շրջանը, որ սահմանակից է Լիբանանի:

Իսրայէլեան բանակը մինչ այդ կը շարունակէր յարձակումները պաղեստինեան շրջաններուն դէմ: Ականատեսներ յայտնեցին, որ աւելի քան 150 հրասայլեր գիշերով Ռամալլա եւ անոր շրջակայք գտնուող գաղթականները մտան՝ ուժի ցուցադրութեան համար: Ռամալլայի գլխաւոր հրապարակին վրայ պաղեստինցիներ կախեցին դիակը Իսրայէլի հետ գործակցող պաղեստինցիի մը: Ռամալլայի այլ թաղամասերու մէջ բախումներ արձանագրուեցան պաղեստինցիներու եւ իսրայէլեան ու-

ժերուն միջեւ: Իսրայէլեան օդուժի ուղղութիւնները ուժեղացան Ռամալլայի մուտքին գտնուող Ամասուրի գաղթականները: Իսրայէլեան բանակը յայտնեց, որ պաղեստինեան գաղթականներուն դէմ անցնող քանի մը օրերուն ընթացքին տեղի ունեցած յարձակումներուն ձեռքարկած է մեծ թիւով «սաքե-կիչներ» եւ ծայրայեղականներ, բռնագրաւած է մեծ քանակութեամբ պէնք ու պիսուածներ, ինչպէս նաեւ՝ գտած է ռուժերու պատրաստութեան ծառայող գործարաններ:

Կապալի մէջ եւս բախումները շարունակուեցան եւ իսրայէլեան բանակը 25 պաղեստինցիներ սպաննեց: Բանակը յայտնեց, որ իր յարձակումներուն նպատակն է

Շար.Ղ՝ Էջ 2

ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՈՒԺ Է, ԻՍԿ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ՝ ՏԿԱՐՈՒԹԻՒՆ

ԿԸՍԷ ՆԱԽԱԳԱՇ ՉՈՐ. ԷՄԻԼ ԼԱՇՈՒՏ

Հանրապետութեան նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ յայտնեց, որ Պէյրութի մէջ գումարուելիք արարական վեհաժողովը կ'ամրապնդէ միջարարական գործակցութիւնը՝ հրատարակելով մարտահրահչներու գիծաց, որովհետեւ մեր միութիւնը ուժ է, իսկ պառակտումը՝ տկարութիւն:

Կրթութեան նախարար Ապտիլ Ռահմի Մրատի ընկերակցութեամբ իրեն այցելած Արար Ռասանդներու Համադաշնակցութեան գործադիր խորհուրդի ներկայութեան, նախագահ Լահուտ կոչ ուղղեց ընդհանրացնելու Լիբանանի փորձա-

նութիւնը, որովհետեւ իրանեանցիներու միակամութիւնը կարելի դարձուց հարաւային Լիբանանի մեծ մասին ազատագրումը, իսկ այսօր արարական աշխարհը միասնութեամբ պէտք է դիմագրաւէ Սեպտեմբեր 11ի դէպքերու անդրադարձները եւ անոնց առիթով արարներուն ուղղուած գրապարտութիւնները:

«Վստահ եմ, որ միակամութեամբ արարական երկիրները կրնան պարտադրել իրենց կեցածքը, որ կը պահանջէ Միջին Արեւելքի մէջ երկարամեայ արար-խրատական հակամարտութեան վերջ դնել արդար, ամբողջական եւ վերջնա-

կան խաղաղութեամբ», ըսաւ ան:

Արարական աշխարհի երիտասարդութիւնը անխախտ թաց մակարդակի հասցուց արարական իրաւունքներուն համար պայքարը, հաստատեց նախագահ Լահուտ, կոչ ուղղելով երիտասարդութեան՝ նպատելու այս հանգրուանին կենսական դարձած ներքին գործակցութեան ամրապնդումին եւ արիւրաբար դիմագրաւելու ապագայի մարտահրահչները, «որովհետեւ ազգերու ուժը իրենց երիտասարդներու վճռակամութիւնն է, իսկ անոնց յաղթանակը՝ երիտասարդներու յառաջիմելու կամքը»:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

ՕՍԿԱՆԵԱՆ – ԻՎԱՆՈՎ ԶԱՆԴԻՊՈՒՄ

Աշխատանքային այցելութեամբ երէկ Մոսկուա մեկնեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ հանդիպում ունեցաւ իր ռուս պաշտօնակիցին՝ Իկոր Իվանովի հետ:

Հանդիպումին ընթացքին Իվանով գոհունակութիւն յայտնեց Մոսկուայի եւ Երեւանի միջեւ քաղաքական երկխոսութեան զարգացման առնչութեամբ: «Երկու երկիրներուն միջեւ մշտական եւ աշխոյժ խորհրդակցութիւններ կը կատարուին, ինչպէս նաեւ լաւ ձեւով կը զարգանայ համագործակցութիւնը միջազգային ասպարէզին մէջ», ըսաւ Իկոր Իվանով:

Նախարար Օսկանեան, իր կարգին, վստահութիւն յայտնեց, որ Մոսկուայի մէջ կայացող բանակցութիւնները կը նպաստեն Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման գործընթացի աշխուժացման: Օսկանեանի համաձայն՝ անհրաժեշտ է բարելաւել «սազմավարական գործընկերութեան» յարաբերութիւնները Մոսկուայի եւ Երեւանի միջեւ, եւ ընդլայնել համարկումը ԱՊՀի ծիրէն ներս:

Մոսկուայի մէջ նախարար Օսկանեան նաեւ հանդիպում պիտի ունենայ տեղւոյն հայ համայնքին հետ:

ԱՐԵՒԷԼԵԱՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՋ ՎԵՐՁԻՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՎԵՐՁ ԳՏԱԾ Է

Արեւելեան Աֆղանիստանի մէջ Թալեպան եւ «Հալիտա» պիսուածներու դէմ 11 օր առաջ ծայր տուած ճակատամարտը վերջ գտած է՝ Ծախի Քոթ շրջանին մէջ. ըստ աֆղան պորավար Ապտիլլա Ճոլէնտայի՝ պիսուածները խոյս կուտան դէպի Փաքիստանի սահմանը:

Ան յայտնած է, որ աֆղան եւ ամերիկեան ուժեր հակակշիռ հաստատուած են ամբողջ Ծախի Քոթ հովիտին վրայ:

Աֆղան պիսուածներու համաձայն՝ սպաննուած են բազմաթիւ պիսուածներ՝ մեծամասնութեամբ փաքիստանցիներ եւ արաբներ:

Ամերիկացի պիսուական բանրբը մը յայտնած է, թէ ճակատումներուն ամերիկեան եւ աֆղան ուժերը 11 փոխարձանագրած են, ներառեալ 8 ամերիկացիներ եւ 80 վիրաւորներ:

Ան ըսած է, որ հարիւրաւոր ահաբեկիչներ եւ մարդասպաններ սպաննուած են: Անոնց մէկ մասը ձերբակալուած է, իսկ ուրիշներ ողջ են ու փախստական:

Մինչ այդ, Աֆղանիստանի պաշտպանութեան նախարարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատարը պոլշացուցած է, թէ ըմբուտներու այլ ապաստանարաններ գործօն են արեւելեան Ուարտաք, Ղապի, Խոսթ նահանգներուն մէջ եւ թէ անոնք մօտ առեւնէն յարձակումի պիտի ենթարկուին:

(ՌՈՅԹԸՐՁ)

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

ՀԱՄԻՏ ՔԱՐԶԱՅ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՓՈԻԹԻՆԻ ՀԵՏ



Քարգայ եւ Փութին՝ մամլոյ միացեալ ասուլիսի ընթացքին:

ՄՈՍԿՈՒԱ, 12 (ՌՈՅԹԸՐՁ).- Աֆղանիստանի փոխանցման կառավարութեան ղեկավար Համիտ Քարգայ երէկ Մոսկուայի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի հետ, ապա կրեմլինի մէջ տեսակցեցաւ նախագահ Վլատիմիր Փութինի հետ:

Մամլոյ միացեալ ասուլիսի մը ընթացքին, Քարգայ շնորհակալութիւն յայտնեց Ռուսիոյ, որ օժանդակած է իր երկրին մէջ խաղաղութեան վերահաստատման գործընթացին:

ՀԱՐԻՐԻ – ՄԵՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ



Հարիրի եւ Մեր

Արդարադատութեան գերագոյն խորհուրդի նախագահ Նարի Լահուտ երէկ արդարութեան նախարար Սամիր Ժըրրի ընկերակցութեամբ փրօթոքոլային այցելութիւն մը տուաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, որ նաեւ ընդունեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըրը:

Վարչապետ Հարիրի երէկ նաեւ ընդունեց կապալառուներու սենտիքայի նախագահ Ֆուատ Խազէնը, որ անգամ մը եւս արծարծեց պետութեան ուղացած վճարումներուն հարցը, ինչպէս նաեւ հիւանդապահներու միութեանց պատուիրակութիւնը, երեսփոխան Ֆարիտ Մըրաբի, նախկին երեսփոխան Թալալ Մըրապի եւ երկրաշահներու սենտիքայի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ սենտիքայի նախագահ Սամիր Տումիթի, որ ներկայացուց երկրաշահներու դիմագրաւած դժուարութիւններն ու պետութեան վճարումներու ուղացումին պատճառած տագնապը:

«ԱՉԴԱԿ»Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

14 Մարտ 2002էն սկսեալ, մեր ընթերցողները իրենց ձայնը տալով ընթացքին, «Ազդակ» կրնան ունենալ օգնականի հետեւեալ ընկերութիւններուն Պէյրութի օդակայանին կապուած թռիչքներուն վրայ: «Ալիթալիա», «Զէի Երլայն» եւ «Տայկական Աւիաուղիներ»:

Յայտնենք, որ տարիներէ ի վեր «Ազդակ» կարելի էր ունենալ արդէն «Միտլը Իսթ»-ի բոլոր թռիչքներուն վրայ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ՆԵՐԽՈՒԺԵՑ...

Շարունակուած Ա. Էլէն

արմատահան ընել ծայրայեղական պաղատանքները: Սաղաթիւնները: Սաղաթիւնները ամբաստանեցին Իսրայէլը, դիտել տալով, որ անհիկա կ'ուզէ վերագրուել կապան ու Այսրոյրդանանը՝ մախողութեան մատնելու համար Չիւսի առաքելութիւնը, որ պիտի սկսի այս շաբթուան ընթացքին: Պաղատանքներն տեղեկատուութեան նախարար Եասէր Ապտ Ռապիօ ըսաւ, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի տղան՝ Օմրին յայտնած է, թէ Իսրայէլ կրնայ վերագրուել Ռամալլային, բայց չյարձակի պաղատանքներն իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի գրասենեակներուն վրայ: Ապտ Ռապիօ ընդգրծեց, որ Իսրայէլեան մեծ ներխուժումը ցուցանի է, թէ Շարոն կ'ուզէ վերստին գրաւել պաղատանքներն ինքնավար շրջանները: Ան աւելցուց, որ Ռաշիմ Կարմէլը տեղեկ էր Շարոնի որդեգրելիք միջոցառումներէն, եւ թէ Սպիտակ Տունը Չիւսի կ'ուզէ վերստին պարզապէս փոշի ցանելու պարտաւորութիւններուն եւ ամբողջ աշխարհին աչքերուն:

Իսրայէլացի բարձրաստիճան պիտուրակաւ մը ըսաւ, որ բանակը կ'ուզէ պատանդները արձակել: Միւս կողմէ, պաղատանքներն իշխանութիւնը երէկ կոչ ուղղեց Ամաարի գաղթականային բնակիչներուն դէմ դնելու Իսրայէլի եւ անոր ներխուժումը ընդունելու անոնց հրահանգներուն: Գաղթականները մտնող իսրայէլեան ուժերը հրապարակներուն վրայ կը հաւատարման հարիւրաւոր երիտասարդներ՝ պանոնք խիստ խուզարկութեան անցնելով: Իսրայէլեան ուժերը կը քանդեն նաեւ գաղթականներուն ենթակառուցները: Պաղատանքներն իշխանութիւնը դէմ յարուցեց շրջաններուն դէմ յարուցելու մտաւորական շրջանները, որոնք կոչ ուղղեցին կառավարութեան տապալելու պաղատանքներն ինքնավար շրջանները, որոնք կոչ ուղղեցին կառավարութեան տապալելու պաղատանքներն ինքնավար շրջանները, որոնք կոչ ուղղեցին կառավարութեան տապալելու պաղատանքներն ինքնավար շրջանները: Մտաւորականները 25 հազար արշակողներն հրեաներ երկ հաւաքի մը մասնակցեցան Թէլ Աւիւի մէջ՝ պահանջելով, որ Իսրայէլ պարտութեան մատնէ ահաբեկչութիւնը:

Անոնք պահանջեցին նաեւ, որ Շարոն թափ տայ պաղատանքներն ինքնավար շրջաններուն դէմ պիտուրական գործողութիւններուն: «Շարոն, դաստ Պուշէն եւ ոմբակոծեց պաղատանքները», կը բացազանչէին անոնք:

Շարոն ճնշումի կ'ենթարկուի աջակողմեաններուն ու ձախակողմեաններուն կողմէ: Առաջինը կը պահանջէ ճնշել պաղատանքները, իսկ երկրորդը՝ կը պահանջէ բանակցիլ անոնց հետ: Շարոն երկուստեքի օր վերցուցած էր Արաֆատի արգելափակումը, արտօնելով, որ ան ապաստանէ շարժի կապայի ու Այսրոյրդանանի հետ: Միացեալ Նահանգները ողջունեցին որոշումը, պահանջելով նաեւ, որ Շարոն արտօնէ Արաֆատի մասնակցութիւնը Պէյրութի արարական վեհաժողովին: Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչըրտ Պատչըր ըսաւ, որ Ռաշիմ Կարմէլը յուսար, որ Իսրայէլ պիտի քննէ Արաֆատի Պէյրութ ձայնը որդեգրելու արտօնութեան հարցը:

ԹԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսնի Մուպարաբ երէկ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Շարոնի հետ, քննարկելու համար ամերիկեան խաղաղարար ճիգերուն կարեւորութիւնը՝ վերջ տալու համար արիւնահեղութեան: ԹԳԻՊՏՈՍԻ հապարտու ռուսաւորները ցոյց տուան մասնակցեցան Գահիրէի համալսարանին մէջ, բողոքելու համար Իսրայէլեան յարձակումներուն դէմ: ԹԻՄՆԻ գերագոյն ղեկավար այսօր Մի Նախագահի կոչ ուղղեց պաղատանքներն ինքնավար շրջաններուն ապաքար Իսրայէլի դէմ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առ տիար Կարապետ Վահան Աճեմեան: Լիբանանի Հայոց Թեմի Դատաստանական Խորհուրդը իր 7 Մարտ 2002 թուականին կայացուցած Ե. նիստին, զբաղեցաւ ձեռնարկական հարցով: Այսու ձեռք նիստի կը հրապարակուի պաշտօնագրաւ, պաշտպանելու համար ձեռնարկ: Ձեռնարկական հարցին յատկացուած 2. նիստը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 23 Մայիս 2002, կէսօրէ ետք ժամը 2:30ին, քաղաքի առաջնորդարանին մէջ, Ս. Նշան: Զներկայանալու պարագային՝ ձեռնարկայութիւնը ներկայութեան համագոր պիտի նկատուի եւ պիտի արձակուի համապատասխան վճիռ:

ԴԱՏԱՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ

(ՌՈՅԹԸՐԸ)

Հ. Յ. Դ. «Գ. ՆժԳԵՂ» ԶԱՆՉՆԱԽՈՒՄԲ ԿՈՍԻՏԵՆՈՒԹԵԱՆ

ՉՈՅՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նիւթ
TVA եւ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ՍԵՆԱՆՈՐՇԵՐ

Ձեկուցաբեր
ՅԱԿՈՒ ԱՐԱՆԱՄԵԱՆ
(Երդուեալ Հաշուեքննիչ)

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 15 Մարտ 2002, երեկոյեան ժամը 8:30ին, Չալքայի Ս. Խաչ Եկեղեցւոյ սրահին մէջ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւօտեան ժամը 9:00ն կէսօրէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուրագրա եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տամա):
- 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Պաշտպանութեան նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (Իսթը) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Քաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (Ամմ Էլ Ամմ) հետ կապուած հարցեր:

Դիմողները պէտք է ներկայանան «Ճաղգոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ նախագահ Երկրայանալը հեռաձայնել 01-259881 եւ 01-242582 ֆիւերուն:

ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՊԵՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՍԼՈՅ ՍԵՆՏԻՔԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ ընդունեց մամուլի սենտիքայի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ սենտիքայի նախագահ Մոհամէտ Պաալպէի, որ արծարծեց ծանուցումներու մարզի կարգաւորումին համար օրէնք մը որդեգրելու անհրաժեշտութիւնը:

Պըրրի յայտարարեց, որ շատ կարեւոր հարցերու առնչութեամբ բազմաթիւ օրէնքներ որդեգրուած են, բայց չեն գործադրուած, եւ ծանուցումներու մարզի կարգաւորման օրէնքի մը որդեգրումը կարեւոր ըլլալով հանդերձ, հիմնականը գայն գործադրելն է: Պաալպէի ըսաւ, որ խորհրդարանի նախագահը այս գծով բազմաթիւ օրինակներ տուած է, ինչպէս յայտնուած էր Արաֆատի արգելափակումը, արտօնելով, որ ան ապաստանէ շարժի կապայի ու Այսրոյրդանանի հետ: Միացեալ Նահանգները ողջունեցին որոշումը, պահանջելով նաեւ, որ Շարոն արտօնէ Արաֆատի մասնակցութիւնը Պէյրութի արարական վեհաժողովին: Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ռիչըրտ Պատչըր ըսաւ, որ Ռաշիմ Կարմէլը յուսար, որ Իսրայէլ պիտի քննէ Արաֆատի Պէյրութ ձայնը որդեգրելու արտօնութեան հարցը:

ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բոլոր այն ազգայինները, որոնք տեղեկութիւն կ'ունենան լիբանանեան պետութեան կողմէ գործադրուած TVAH տուրքին մասին, կրնան ներկայանալ Հայկական Երեսփոխանական Գրասենեակ «Ճաղգոյեան» կեդրոն, 2րդ յարկ, ամէն Ուրբաթ, կէսօրէ ետք ժամը 4:00 5, բացառութիւն ստանալու համար ընկեր Յակոբ Արաքամեան (երդուեալ հաշուեքննիչ), իրենց դիմագրաւած դժուարութիւններուն գծով:

ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

«ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՀԱՆԳԻՍԱԽՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԵԾԱՀԱՆԳԵՍ ԹԱՓՈՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուսնի ի Վիրապի տօնին՝ «ԱՆԹԻԼԻԱՍԻ ՈՒԽՏԻ ՕՐ»ՈՒՄՆ առիթով, Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները:—

- ՇԱԲԱԹ՝ 16 Մարտ, առաւօտեան ժամը 9:30ին՝ Ս. պատարագ
- ՇԱԲԱԹ՝ երեկոյեան ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն՝ ի պատրաստութիւն յաջորդ օրուան ուխտաւորութեան:
- ԿԻՐԱԿԻ, 14 Մարտ, Սուրբ եւ անմահ կաթարագ, որուն պիտի հետեւի մեր Հաւատքի Հօր՝ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՆՈՐԻՉԻ ԱՁՈՎ գլխաւորութեամբ արքայապետ մատնաքննելու թափօրը Անթիլիասի Մայրավանքի շրջափակին մէջ, մասնակցութեամբ Միաբան հայրերու եւ քահանայից դասուն:

Պիտի պատարագէ եւ քարոզէ
ԳԵՐՇ. Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐՔ. ՏԵՄԻՐՃԵԱՆ

Արարողութեանց եւ թափօրին պիտի հանդիսասպետէ
Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ժամերգութիւն ժամը 8:30ին
Ս. պատարագ ժամը 10:00ին
Քարոզ ժամը 11:00ին
Ս. Աշերու եւ այլ Սրբոց ժամը 11:30ին

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր կապակները՝ մասնակցից դատնալու Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ուխտի Օրուան հոգեպարար արարողութիւններուն:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒՄԸ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆԻ

Հովանաւորութեամբ
ՄԵԾԻ ՏԱՆԵ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

- ԳԱՍԱՆՍՈՒԹԻՒՆ
- ԳԵՂԱՐՈՒԹԵԱՆԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
- «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ»Ի ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 18 Մարտ 2002, երեկոյեան ժամը 7:00ին, կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանի «Գ. Կիլիկեցեան» սրահին մէջ:

ԿԵՆՍՈՒՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ԵՐԿՐԱԶԱՓՆԵՐՈՒ

Պետական պաշտօնեաներու հարցերու խորհուրդը կը յայտարարէ, որ ընտրութիւն - մրցանքով պիտի ընտրուին կենսոլորտի նախարարութեան համար կենսոլորտային մարզի գանազան երկրաչափներ:

Ընտրութիւն - մրցանքին մասնակցելու համար դիմումները պէտք է ներկայացնել ամէնէն ուշը Հինգշաբթի, 28 Մարտ 2002ին, խորհուրդի կեդրոնատեղին, Ռաշիտ Զարամէ փողոց (Վերտէն):

Յաւելեալ մանրամասնութիւններ ստանալու համար դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Ճաղգոյեան» կեդրոն:

ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Նուրհան Սարեան եւ գուստրը՝ Մարալ եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց քրոջ, հօրաքրոջ եւ հարազատին՝

ՍԵՂԱ ՍԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շարաթ, 9 Մարտ 2002ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, 14 Մարտ 2002, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրըն Շրպպէի Ազգային դերեզմանատեղին:

- Ներկայիս ընդունիլ իրել մահապոյ:
- Յաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցւոյ մէջ:

ԳՐԱԽՈՒՄՈՐ

4 ՄԱՅԻՍ 2002, ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԱԿՈՒՄԲ

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆ

ՆՈՒԻՐՈՒՄԸ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԱՆԴԱՄ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻԶ, ՀԱՍԱԶԳԱՅԻՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՏԵՐԻՆ՝ ՀՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆԻ (ՄԱՆՈՒԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻՈՎ)

Տեղի կ'ունենան ՉՈՐԵՔԸԱԲԹԻ, 20 ՄԱՐՏ 2002, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 8:30ԻՆ, «ՅԱԿՈՒ ՏԵՐ ՍԵԼԵՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱԿԻՆ ՄԵՋ:

Կազմակերպութեամբ՝

Հ. Յ. Դ. ՉԱՒԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ

Նիւթ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻՆ ՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ Զրոյցին կը մասնակցի՝

ՊՐՆ. ԿԱՐՕ ՅՈՎՀԷԱՆՆԷՍԵԱՆ ԴՈՎՏ. ԱՐՏԱ ԷՔՄԷՔՏԻ

Տեղի կ'ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 13 Մարտ 2002, կէսօրէ ետք ժամը 4:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

ՀՐԱԽԻՐ

ՍՈՒՐԻՍ

ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱԻ

ԳԱՄԱՍԿՈՍ, 12 (ՌՈՅԹԸՐԶ)։- Սուրիոյ ու տիկանութիւնը ձեռքարկելէ ետք երկրին պետական դրամատան ընդհանուր տնօրէնը, որ անուղղայ գտնուած է իր պաշտօնին մէջ, տեղեկացուց կառավարութեան պաշտօնաթերթը՝ «Թըշ-րին»։

«Թըշրին»ի մէջ լոյս տեսած տեղեկագիրը նշեց, որ Սուրիոյ Առեւտրական Դրամատան ընդհանուր տնօրէն Մահմուտ Նատիմ Մըքթալ ձեռքարկուեցաւ ենթադրաբար միլիոնաւոր տոլարներ օտար դրամատուն փոխանցելէ ետք։

Տեղեկագիրը յաւելեալ մանրամասնութիւններ չնշեց, ինչպէս նաեւ անմիջական պաշտօնական մեկնաբանութիւններ չեղան այս հարցին առնչութեամբ։

Սուրիոյ մէջ սեփական դրամատուներ գոյութիւն չունին։ Սուրիոյ սահմանափակ քայլեր առած է վերանորոգելու համար երկրին տնտեսական կացութիւնը, օժանդակութեամբ նախագահ Պաշար Ասատի, որ խոստացած է փութութեան դէմ պայքարիլ։

ՉԷՅՆԻ՝ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՉ

ԻՐԱՔԻ ՆԿԱՏԱՍԲ ՆՈՐ ԿԵՅՈՒԱԾԵԼԵՐ ԿԸ ՁԵՒԱԴՈՐՈՒՄ

Երոզական երկրներ, որոնք երկարատեւ է ի վեր իրաքի բարեկամները կը նկատուէին, սկսած են վերատեսութեան ենթարկել իրենց կեցածքը՝ մօտենալով ամերիկեան խիստ կեցուածքին, որ Պաղտատի դէմ պիտուրական գործողութեան մը համար քարոզչութիւն կը կատարէ։

Երոզական կեցածքին փոփոխութիւնը ակնբախ կը դառնայ Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնիի երոզական եւ միջինարեւելեան շրջապտոյտին չուրախեան։ Չէյնիի շրջապտոյտին նպատակն է զօրակցութիւն ապահովել իրաքի դէմ յարձակումի մը ծրագիրին։ Բարձրաստիճան դիւանագետներ կ'ըսեն, որ երոզական երկիրներ հաւանաբար զօրակց պիտի կանգնին եթէ Սատամ Հիւսէյն մերժէ վերադարձ ՄԱԿի վէճիքի քննիչներուն։ Իրաք Դեկտեմբեր 1998էն ի վեր կը մերժէ քննիչներուն վերադարձը։

Երոզական կեցածքի փոփոխութիւնը շեշտուեցաւ, երբ Ե. Միութեան արտաքին գործոց նախարարներու ժողովը չորրորդեց Պեյճիքայի ներկայացուցած մէկ առաջարկը, որ կ'առաջարկէ երո-

զական պատուիրակութիւն մը ուղարկել Պաղտատ՝ համոզելու համար Սատամ Հիւսէյնը, որ ենթարկուի ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի որոշումներուն։ Նախարարները մերժած էին Պեյճիքայի առաջարկը, դիտել տալով, որ իրաքի հետ բանակցելիք նիւթ չունին։

Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով վերստին շեշտեց, որ իրաքի տագնապի շուրջ տարակարծութիւնները պէտք է լուծուին Ապահովութեան խորհուրդի որոշումներուն հիման վրայ։ Իվանով թէեւ ակնարկութիւն չկատարեց Միացեալ Նահանգներու հանդէպ, սակայն յստակ էր, որ ան դէմ կ'արտայայտուէր իրաքի դէմ պիտուրական գործողութեան մը ծրագիրին։ Իվանով շեշտեց, որ Մոսկուա հաստատ կը մնայ հարցը քաղաքական ու դիւանագիտական միջոցներով լուծելու կեցուածքին վրայ։

ԻՐԱՔ Կ'ԱՆՏԵՍԷ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍՊԱՌՆԱԼԻԵՆԵՐԸ

Սատամ Հիւսէյն յայտնեց, որ ամերիկեան սպառնալիքները իրաքի դէմ անկարելի են ու ապարդիւն, որովհետեւ անոնք չեն փախցներ իրաքն ու անոր ժողովուրդը։

Սատամ, որ կը խօսէր փոքր - Պաղտատ քիւրտ ղեկավարներու հետ, դիտել տուաւ, որ իրաք հասած է այնպիսի հանգրուանի մը, որ նման սին սպառնալիքներ որեւէ ազդեցութիւն չեն գործէր եւ չեն վախցներ։

Սատամի յայտարարութեան պահուն, Չէյնի կ'այցելէր սահմանակից Յորդանան՝ տեսակցութիւն ունենալու համար Ապտալլա Թաւաուքիին հետ։ Աւելի ուշ, ան տեսակցեցաւ Թաւաուքիին հետ. անոնք քննարկեցին միջերկրականեան թղթածրարին կապուած հարցեր։ Սատամ եւ իրաքեան մամուլը յայտնեցին նաեւ, որ Չէյնիի շրջապտոյտը սպարդիւն է, որովհետեւ ան ձեռնուձայն պիտի վերադառնայ։

Չէյնի ձեռնարկած է միջինարեւելեան շրջապտոյտի մը, որ կ'ընդգրկէ 12 երկիր, որոնց շարքին նաեւ Իսրայէլ։ Միացեալ Նահանգներու փոխ նախագահը, ինչպէս նաեւ յատուկ պատուիրակ Չիւի շրջան իրենց ժամանումով պիտի փորձեն հանդարտութիւն մը դասաւորել պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն միջեւ, որովհետեւ անոնք միջեւ պայքարը հասած է զագաթնակէտին եւ օրական կ'արձանագրուին երկուստեք բազմաթիւ զոհեր, ինչպէս նաեւ մեծաթիւ վիրաւորներ։ Դէտեր, սակայն, շատ մեծ յոյսեր չունին ամերիկացի պատուիրակներուն փորձերէն, որովհետեւ գետնի վրայ ոչ մէկ նշոյլ կայ հանդարտեցման։

(ՌՈՅԹԸՐԶ)

ԹՈՒՐԷԻԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՏԱԳՆԱՊԻԼ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ

ՊՈԼԻՍ, 12 (ՌՈՅԹԸՐԶ)։- Թուրք ձախակողմեան քաղաքական անձնաւորութիւն Տոկու Փերինչէք Երեքարթի օր յայտնած է, թէ Ե. Միութեան Անգարայի գրասենեակէն յղուած ներքին գաղտնի ելկտրոնիք նամակներու իր կողմէ հրատարակուած իր հայրենասէրի պարտականութիւնը կը նկատէ օտար թշնամիներու դէմ, որոնք կը փորձեն վնաս հասցնել երկրին։

Թուրքիոյ Երոզական Միութեան անդամակցութեան համար տանաձեւակցութեան ճիգերուն գծով բանակցութիւն թափ առած է անցնող քանի մը շաբաթներուն, մինչ խորհրդարանը լծուած է բարեկարգումներու վերաբերեալ կարգ մը օրէնքներ վաւերացնելու աշխատանքին։ Ե. Միութեան չափանիշներուն հասնելու եւ լիբրաւ անդամակցութեան բանակցութեանց ճամբան հարթելու համար։

Փերինչէք Փետրուարին զայնակողութիւն ստեղծած էր, երբ սկսած էր նշեալ նամակները հրատարակել։ Ան չէ յայտնած, թէ ինչպէս ձեռք ձգած է գանդը։

Ե. Միութեան Յանձնաժողովի նախագահ Ռոմանօ Փրոտի հեռաձայնային հաղորդակցութեան մէջ մտած է վարչապետ Պիլիքի ինչեւիթի հետ՝ նշեալ հարցով գանգատ ներկայացնելու համար, մինչ Անգարայի մէջ դատախազներ քննութիւն բացած են։

Փերինչէք, որ Երեքարթի օր վկայութիւն տուած է, յայտնած է, թէ ելկտրոնիք նամակները յայտնաբերած են Ե. Միութեան սարքած դաւեր՝ Թուրքիոյ դէմ աշխատելու գծով։

ՍՈՒՐԻՍ

ՀՈՄՍԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՀՐԱԺԱՐԵՑԱՆ ԴԱՏԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼԷ

ՊԵՏՐՈՒԹ, 12 (ՌՈՅԹԸՐԶ)։- Սուրիացի երեսփոխան Մարտուն Հոմսի պաշտպան փաստաբանները Երեքարթի օր տեղի ունեցած դատավարութեան ետք հրաժարեցան անոր դատը պաշտպանելէ, յայտարարելով, որ իշխանութիւնները արդէն որոշած են դատավարութեան աւարտը։

Հոմսի ամբաստանուած է կառավարութեան մէջ լարուածութիւն յառաջացնելու յանցանքով, քաղաքական ազատութիւն պահանջող իր կատարած կոչերուն ընդմէջէն։

Հոմսի պաշտպան փաստաբանները իրենց ներկայութիւնը անհեթեթ նկատած են Ե. Տրաքիոյ անոր դատը պաշտպանելէ, որովհետեւ ըստ իրենց՝ արդէն իսկ իշխանութիւններուն կողմէ ան պիտի պատժուի քաղաքական պատճառներով։

«Դատավարութեան արդիւնքը արդէն իսկ դատարանէն դուրս որոշուած է՝ հարկ չկայ գայն շարունակելու», յայտնեց Հայաստան Մայլէ, պաշտպան փաստաբաններէն մէկը։

Փաստաբանները նշեցին նաեւ, որ Հոմսի առողջապահական հարցեր ունի եւ կը մեքոտի գայն հիւանդանոց փոխադրել։

Երեքարթի օրուան դատավարութեան ընթացքին Հոմսիի պայմանաժամ տրուեցաւ մինչեւ 20 Մարտ նշանակել պաշտպան փաստաբաններու այլ խումբ մը, որուն մէջ կրնան նշանակուիլ նաեւ միջազգային փաստաբաններ։

ԹՈՒՐԷ ԵՒ ՅՈՅՆ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ՝ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՉ
ԱՆԳԱՐԱ, 12 (ՌՈՅԹԸՐԶ)։- Թուրք եւ յոյն պաշտօնատարներ երկուշաբթի օր Անգարայի մէջ ժողով մը գումարած են՝ բանակցութեանց նոր փուլ մը ընթացքի մէջ դնելու համար, պատմական մրցակիցներուն միջեւ մերձեցումը ամրապնդելու եւ ի վերջոյ քննարկելու նպատակով հարցեր, որոնց արժարժոււմը նախապէս «արգիլուած էր»։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Այսու կը յայտարարենք հաւատացեալ մեր ժողովուրդին, թէ Կիրակի, 17 Մարտ 2002, Կաթողիկոսարանի Ուխտի Օրն է։
Այդ օրը թեմիս եկեղեցիներուն մէջ Ս. պատարագն ու հոգեհանգստեան արարողութիւնը պիտի աւարտին ժամը 10:30ին։ Եկեղեցիներէն ժամը 10:30ին պատեր ժողովուրդը պիտի փոխադրեն մայրավանք, մերկայ գտնուելու Ս. պատարագին եւ մասնակցելու Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ս. Աջով եւ այլ մասունքներով կազմուած հանդիսաւոր թափօրին։

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ
Հովանաւորութեամբ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Նիւթ՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԶԱՐԹՕՆՔԸ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀՈՒՆԶՈՎ»
Կազմակերպութեամբ՝ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑՈՅ ՀԱՄԱԼԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄՈՒԹԵԱՆ (ՇԵՇՍ)
Կիրակի, 17 Մարտ 2002, կտօրէ ետք ժամը 4:00ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ԱԳՔԻԼԻԱՍ։

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱԼԱՐԱՆԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՄ
ՆԱԽԵՐԳԱՆՔ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ «ՄԱՏԵԱՆ ՈՂԵՐԳՈՒԹԵԱՆ - ՆԱՐԵԿ»Ի 1000ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ
Հանդիսապետութեամբ՝ ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐ. ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. (Կաթողիկոս Պատրիարքի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Վայոյ)
Բանախօսութեամբ՝ ԳՈՎՏ. Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԳ. ԹՈՓԱԼԵԱՆԻ
Ուրբաթ, 15 Մարտ 2002, ժամը 20:00ին, «Արարատեան» սրահ, Վայ Կաթողիկէ պատրիարքարան, Ժեմառուի։

ՀՍԿՈՒՄԻ ՇԱՐԱԾ ԱՆԹԻԼԻԱՄԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ
Ս. Գրիգոր Լուսաւորիչի ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊԻ տօնին եւ Անթիլիասի մայրավանքի ՈՒՍՏԻ ՕՐՈՒԱՆ առիթով, ՀՍԿՈՒՄԻ աւանդական արարողութիւնները տեղի պիտի ունենան այս շաբաթ, 11 - 15 Մարտի միջոցին, երեկոյեան ժամը 5:00ին։
Հսկումի ժամերգութեանէն ետք, միաբան հայրեր հոգեւոր խորհրդածութիւններ պիտի կատարեն քրիստոնէական եկեղեցւոյ հայրերու կողմէ նշուած եօթը առաքինութիւններուն մասին։
Խորհրդածութիւնները տեղի պիտի ունենան հետեւեալ կարգով։

Չորեքշաբթի, 13 Մարտ Տ. Յուսէփ աթ. Մարտիրոսեան՝ «Աշխատասիրութիւն»
Հինգշաբթի, 14 Մարտ Տ. Մակար աթ. Ազգարեան՝ «Ողորմածութիւն»
Ուրբաթ, 15 Մարտ Տ. Գեղարդ աթ. Քրիստօֆէան՝ «Ժուժկալութիւն»
Սիրով կը հրաւիրուին հաւատացեալները՝ հոգեկան այն ներքին պատրաստութեան, որպէսզի առաւել զիտակցութեամբ ապրին եւ արժեւորեն ՈՒՍՏԻ ՕՐՈՒԱՆ իմաստը իրենց կեանքին մէջ եւ նորոգուած հաւատքով մասնակցին Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉԻ ԱԶՆԻ եւ սրբապան մասունքներուն թափօրին, Կիրակի, 17 Մարտին։
ԳԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը
Ձեր ինքնաշարժին պենցիմին, մագուրին, իւղին, ինչպէս նաեւ լուսլու համար, վճարումին հետ միաժամանակ մերկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան։



ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը
FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն։
• ԱՅՇԼԻԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
• Համազգայինի գրախանութ, Պուրճ Համուտ
• Գրատուն Caravelle, Չալքա
• Գրատուն Sava, Այնճար
• Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
• Obelix հաստատութիւն, Անթիլիաս

- FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԵՏԵԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԷՉ
1. CORAL JAL EL DIB, Ժէլ Էլ Տիպ
2. HYPCO ANTELIA, Կարաթ Ալ Դաուարնէ
3. SPEED ANTELIA, Կաթողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABAT, Պապատն մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանէն առաջ
7. MEDCO KARANTINA, Զարանքիայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դաւակոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիլայէլ, Սատա պողոտայ
10. SPEED ALITIHAD, Կալէրի Իթիհաս
11. MANAR FANAR, Ֆանար, Նատր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տրայի կամուրջ
14. ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տրայ, «Ալմազա»ի կից
15. ԱՍՐԳՄԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սիւն Էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին։

Մագուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն։

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱՔ ԶՐԻՕՐԵԼ

ՎՐԺԷՔՄԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

ՆԱՍԱԿԱՆԻ

ՅԱՆՅԱԻՈՐԸ ԾՆՈՂՔԸ ՉԷ՝ ՄԻԱՅՆ

Տարակոյն չկայ, որ լիբանանահայության կեանքը յուզող այժմուկ ամենին հրատապ հարցերն են կրթական տագնապն է՝ թե՛ նիւթական եւ թե՛ զուտ ուսումնական մակարդակներու վրայ: Փաստորեն ներկայիս այս հարցը լիբանանահայության համար անհրաժեշտ է, որ դառնայ մնայուն քննարկման առարկայ:

Իբրեւ այս գաղութի դիմագրւած հարցերը լուսարձակի տակ առնող լրատուական միջոց, մենք կը շարունակենք մեր էջերուն մէջ տեղ տալ լիբանանահայության կեանքը եւ մանաւանդ կրթական կեանքը յուզող կարծիքներու եւ տեսակետներու: Այս ծիրին մէջ, ստորեւ՝ «Նամակահի» բաժնով կու տանք սրտցալ ազգայինի մը անկեղծ մտածումները ընդհանրապէս մեր դիմագրւած կրթական հարցերուն մասին:

Նամակը պատասխան մըն է ամցել Հինգշաբթի, 7 Մարտին մեր 4րդ էջով տրուած «Ինչո՞ւ» խորագրեալ յօդուածին:

Յայտնենք, որ գրութեան մէջ արտայայտուած ոչ բոլոր կետերուն համաձայն ենք: Մանաւանդ վերապահ ենք գրութեան այն բաժնին, որ արտաբերուածը, ուր հեղինակը կ'արտայայտէ այն միտքը, որ կարգ մը հայ վարժարաններ գիշտ են իրենց հայեցի դաստիարակութեան օժախ դառնալուն առաքելութենէն եւ կրթութեան սպարտեզին կը մտտենան զուտ նիւթական շահի հասկացողութենէն մեկնած:

Այսուհանդերձ, անհրաժեշտ է, որ դպրոցական այս տագնապը իր տեղը ունենայ հրապարակային քննարկումներուն ընթացքին: Մեր գաղութի դիմագրւած հարցերը կը լուծուին համապարփակ եւ բաց քննարկումներու միջոցով:

«Ազգակ»-ի Հինգշաբթի, 7 Մարտ 2002ի թիւով կարդացինք «Ինչ ու» խորագրով Պետրոս Ծէմմէսեան ստորագրուած թիւնը կրող յօդուածը: Յօդուածը կ'անդրադառնար ոչ հայկական վարժարան յաճախելու օրէ օր ծաւալող եւ վտանգաւոր աստիճանի հասնող երեւոյթին:

Յօդուածագիրը արդար է իր տագնապին ու ընդվզումին մէջ եւ իրաւունք ունի ահազանգալին նկատելու ստեղծուած կացութիւնը: Կը բաժնենք նաեւ յօդուածագիրին կողմէ ծնողներուն հասցեագրուած մեղադրանքները, ուր անորք ոչ հիմնաւորեալ պատճառներով եւ երբեմն ալ՝ անփութեան մղուած կը փորձեն արդարացնել ոչ հայկական վարժարան ուղարկելու իրենց որդեգրած քայլը: Այո՛, խաբկանք է ծնողներու կողմէ տրուած հայկական վարժարաններու մակարակի, տնտեսական դժուարութիւններու, ինչպէս նաեւ արաբերէն լեզուին լաւապէս տիրապետելու հիմնաւորումներով արդարացումները: Այսուհանդերձ, առարկայական մտտեցումը կ'ենթադրէ, որ այս տագնապը քննարկուի համապարփակ է ամբողջական ձեւով: Այդ քննարկումը մեզի կը դնէ ստեղծուած կացութեան բոլոր պատճառները արժեւորելու տրամադրութեամբ:

Ճիշդ է՝ ամբողջ յանցանքը բեռնել հայ ծնողքի ուսերուն եւ զայն նկատել ամբողջական պատասխանատու: Կայ մետալին միւս կողմը: Լիբանանահայ վարժարան կեանքը վերջին 10ամեակին բռնած է գահավիժ ընթացք մը եւ այսօր այդ ընթացքը մեզի կը դնէ այնպիսի կացութեան մը, որ զիմաց, որ հաւաքական պատասխանատուութիւնը եւ ծրագրուած աշխատանքը կրնան միայն երաշխաւորել հայ դպրոցին փրկութիւնը:

Այո՛, կրթական մարզը պէտք է դարձնել մեր բոլոր կարգավերաբերութիւններու եւ յարանուստութիւններուն մտահոգութեան առանցքը եւ առաջնահերթ պարտաւորութեան արտասանուած քայլերը եւ երբեմն ալ քննադատական խօսքերը նպաստէն բերել, ոչ ալ ծնողներուն տրուած յորդորներն ու հայ ուսուցիչին:

Հասցէին ուղղուած լորձանշուրթ գնահատականները կրնան բարեշքել կացութիւնը: Կ'ապրինք հանգրուան մը, ուր ամէն ինչ պէտք է արժեւորել իր արդիւնքով: Այսօր կ'ուզենք մեր վարժարաններուն պարզած վիճակը փայլուն տեսնել, սակայն իրականութիւնը այլ է:

Կրթական կեանքով զբաղող բոլոր պատասխանատուները պէտք է անդրադառնան, որ կը գտնուին պատասխանատուութեան ամէնէն բարձր դիրքին վրայ: Պարզապէս կան յաջողութիւնները, փոքր իրագործումները չեն կրնար գինովցնել թէ՛ պատասխանատուները եւ թէ՛ ծնողները: Պետական քննութիւններու յաջողութեան համեմատութեան բարձր թիւն ալ հիմնական զբաւեան չէ կրթական համակարգի արժեւորումին համար:

Ծանօթ է բոլորին, որ վերջին տարիներուն պետական քննութեանց նկատմամբ նախարարութիւնը կը ցուցաբերէ որոշ թոյլտուութիւն: Հայ անհատի կարգաւորման, ազգային անուր նկարագրի կերտման, համայնարարական քաղաքական պատասխանատուութեան եւ, վերջապէս, ազգային որակական մարզուած ստեղծելու հիմնական աղբիւրն է հայ դպրոցը:

Ո՛ր է այսօր մեր ուսանողութիւնը մեր ազգային հաւաքական կեանքին մէջ: Կատասխանը պէտք է տան անշուշտ առաջին հերթին մեր դպրոցներու պատասխանատուները եւ տնօրէնները: Ո՛ր է այսօր նորահաս սերունդը հայ մշակութիւնը տարբեր բնագաւառներուն մէջ: Կատասխանը դարձեալ պէտք է գայ հայ դպրոցէն:

Ո՛ր է այսօր նորահաս սերունդը ազգային - միութեանական կեանքին պատասխանատուութիւնը: Այսօր մեր դպրոցներուն կարեւոր տոկոսը այլեւս զիջած է հայկականութեան եւ հայեցի կրթութեան անփութեան: Եթէ օճախ մը ըլլալու իրենց առաքելութենէն: Այո՛, հայ դպրոցով զբաղող պատասխանատուները կարեւոր մաս մը հայ դպրոցին կը մտնեն այնպիսի անփութեան պատասխանատուութեան:

Այսօր մեր դպրոցներուն կարեւոր տոկոսը այլեւս զիջած է հայկականութեան եւ հայեցի կրթութեան անփութեան: Եթէ օճախ մը ըլլալու իրենց առաքելութենէն: Այո՛, հայ դպրոցով զբաղող պատասխանատուները կարեւոր մաս մը հայ դպրոցին կը մտնեն այնպիսի անփութեան պատասխանատուութեան:

Այսօր մեր դպրոցներուն կարեւոր տոկոսը այլեւս զիջած է հայկականութեան եւ հայեցի կրթութեան անփութեան: Եթէ օճախ մը ըլլալու իրենց առաքելութենէն: Այո՛, հայ դպրոցով զբաղող պատասխանատուները կարեւոր մաս մը հայ դպրոցին կը մտնեն այնպիսի անփութեան պատասխանատուութեան:

Հատկապէս, թող ներեն մենք, որ շարաչար սխալած են իրենց առաքելութեան մէջ: Վերջին շրջանին ակադեմիայի եւ ակադեմիայի կ'ըլլանք նաեւ հոս ու հոն կազմուող, վերամշակուող, վերափոխուող պարագայական ծրագրերը, որոնք երկար վազքի վրայ ոչինչ կը նշանակեն եւ, ինչու չէ, նաեւ կը ստեղծեն շփոթ եւ ոչ բարենպաստ մթնոլորտ: Ուսումնական մարզակի բարձրացման համար կատարուող այս նախաձեռնութիւնները, որոնք դժբախտաբար կը կատարուին «մասնագիտական» սխալ մեկնակէտով, կը խոչընդոտեն այլապէս կիրարկուելիք շատ մը գործնական քայլեր: Պիտեմք հաւատարմաբար կազմակերպել համարողներուն քայլերը արդեգրուած քայլերով:

Այլ խնդիր մը, որ կը ծառանայ մեր դիմաց, ոչ հայկական վարժարաններու հետ բաղդատական կատարելու եւ ըստ այնմ առաջնորդուելու բարդոյթն է: Այս մէկը այլապէս օգտակար կրնար ըլլալ, եթէ դառնար միջոց եւ ոչ թէ նպատակ: Այս մտածողութեան հեղինակները, որոնցմէ նաեւ կարելի մաս մը իր ուսումը ստացած է ոչ հայ վարժարանի մը մէջ, բնականաբար պիտի ձայնակնեն երաշխաւորելու հայ դպրոցի վերելքը, որովհետեւ անոր առաքելութիւնը շատ աւելին է, քան այդ օտար վարժարանը:

Վերջապէս, թերեւս ժամանակն է, որ այլեւս այս հարցերը ենթարկուին հրապարակային, սակայն առարկայական ու լուրջ քննարկումի, որպէսզի յաջողի սխալներու սրբագրումով եւ ազգային յստակ տեսլականով ընթացող քայլ առ քայլ հետեւողական ուժգնութեամբ:

Գիտակից ենք, որ այս կենսական մարզի պատասխանատուութեան բեռը եւ պարտաւորութիւնները շատ ծանր են ու դժուար: Այդ պատասխանատուութեան մէջ ոչ մէկ ատեն իրաւունք ունինք գիրենք առանձին ձգելու, թէ՛ մեր համայնքներով, թէ՛ մեր գործնական ներդրումով:

Ի խնդիր հայ դպրոցի փրկութեան:

Ք. ԱՏՈՒՐԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

ՄԱՆՆԱԿՅՈՒԹԻՒՆ «ԿՐՕՆԵՐՈՒ ԵՒ ՄՇԱԿՅՈՒԹԵՐՈՒ ՀՆԱԳԻՊՈՒՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Ուրբաթ, 8 Մարտին Կիրակի 10 Մարտ, Նիկոսիոյ Արխանկելոս (Հրեշտակապետ) վանքին մէջ տեղի ունեցաւ միջազգային համագումար մը՝ «Կրօններու եւ Մշակոյթներու հանդիպում» խորագրով, կազմակերպութեամբ Կիպրոսի Քիթթոս վանքի Մշակութային Հիմնարկին:

Յանուն Արամ Ա. կաթողիկոսին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը համագումարին իր մասնակցութիւնը բերաւ պատուիրակութեամբ մը գլխաւորութեամբ՝ Վարուժան Եպս. Հերակեանի (կաթողիկոսական փոխանորդ Կիպրոսի թեմին): Պատուիրակութեան մաս կը կազմէին նաեւ Գեորգ Եպս. Նաչեբեան (առաջնորդ Լիբանանի հայոց թեմին), Պարթեւ վրդ. Կիլիկեան (փոխ տեսուչ Դպրեվանքի), Սեպուհ սրկ. Դաւիթեան (անդամ Կիպրոսի թեմի Ազգ. վարչութեան), տղթ. Անդրանիկ Աշեան (ատենապետ Կիպրոսի Հայ Դատի յանձնախումբի), Անի Լաչինեան (տնօրէն Մեկուսեան կրթական հաստատութեան) եւ Անահիտ Էսքիբեան (վարիչ Կիպրոսի թեմի քրիստոգոստիարակութեան բաժանմունքի):

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան եւ խօսք առին Կիպրոսի հանրապետութեան նախագահ Կլաֆթոս Քրիսթիան, Կիպրոսի խորհրդարանի նախագահին ներկայացուցիչը, ինչպէս նաեւ Կիպրոսի, Յունաստանի եւ Ռուսիոյ բարձրաստիճան կառավարական անձնակազմի ներկայացուցիչներ, Միջազգային Ողիմպիական կոմիտէի անդամներ, ԱՄՆ-ից 2004 Աղիմպիական կոմիտէի նախագահը, նախարարներ, դեսպաններ եւ աւելի քան 150 համալսարաններու նախագահներ եւ դասախօսներ, զանազան երկիրներէ:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան նաեւ Յոյն Ուղղափառ եկեղեցիին Կիպրոսի եկեղեցւոյ պետ՝ Նիքոստոս արքեպիսկոպոսը, Աղքատաշէրիոյ Պետրոս պատրիարքը եւ Անտիոքի Իգնատիոս Պատրիարքը: Նոսք առին նաեւ Յոյն Ուղղափառ Պատրիարքութիւններու ներկայացուցիչներ՝ Պիլիպէն, Երուսաղէմէն եւ Մոսկուայէն:

Քրիստոնեայ այլ եկեղեցիներու կարգին, Արամ Ա. կաթողիկոսի պատգամը կարգաց Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեորգ Եպս. Նաչեբեան: Ապա յարգաբար խօսք առին Յովհաննէս Պողոս Բ. պապին ներկայացուցիչը եւ Անլիթեան եկեղեցւոյ ներկայացուցիչը: Յաջորդեցին ուղերձներ՝ հրեայ, իսլամ, պոստապական, թատլիստ եւ հիմնուած կրօններու ներկայացուցիչներէ, իսրայէլէն, իրանէն, Չինաստանէն եւ Հնդկաստանէն: Աւելի քան չորս ժամ տևած բացման հանդիսութեան ընթացքին յատուցուողական սարքերով ուղերձներ փոխանցեցին նաեւ Տիբեթական պատրիարք Պարթևոմէոս Բ. եւ Մոսկուայի եւ Համայն Ռուսաստանի պատրիարք Ալեքսի Բ.:

Շաբաթ, 9 եւ Կիրակի 10 Մարտին, համագումարը շարունակեց իր աշխատանքները, համալսարանական եւ կրօնական անձնակազմի ներկայացուցիչներով, դասախօսութիւններով եւ զրոյցներով:

«ԱՐԿԱՐՈՒԹԻՒՆ Ե ԱԶԳԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԿՍՏԱՆՈՒԹԵԱՆ, ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ՃԱՄԱՆ» ԿԵՆՏՐՈՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի, 10 Մարտի առաւօտեան Արամ Ա. կաթողիկոս Դամասկոսէն (ուր մասնակցեցաւ Երուսաղէմի Զաքարիա Ա. պատրիարքներուն հետ Միջին Արեւելքի Արեւելեան Ուղղափառ (ոչ քաղկեդոնական եկեղեցիներու տարեկան ժողովին) վերադարձին մամուլին հետեւեալ յայտարարութիւնը կատարեց:-

«Նոր ընդվզումով ու մտահոգութեամբ կը հետեւինք Պաղեստինի մէջ տեղի ունեցող ցաւալի դէպքերուն: Ընդունելի չեն երբեք Իսրայէլի կողմէ կատարուող բիրտ արարքները պաղեստինցի անմեղ ժողովուրդին դէմ: Այս բիրտ արարքները, որոնք անցած են արդէն ամէն տեսակ սահման ոչ չափանիշ, դէմ են միջազգային օրէնքներուն ու մարդկային, կրօնական ու բարոյական արժէքներուն եւ սկզբունքներուն: Իսրայէլ տակաւին անօրէն կերպով բռնազրաւած կը պահէ արաբական հողերը՝ Կազան, Երուսաղէմ, սուրիական կողմը, Հարաւային Լիբանանի Երզրայանի ազարականները: Ինչպէս Իսրայէլ կ'անտեսէ ՄԱԿի որոշումները եւ չի հեռանար իր բռնազրաւած հողերէն: Ինչպէս տակաւին կը շարունակէ իր բռնարարքները Երուսաղէմը հրէացիներով, նոր ընկալուողները հաստատելով, նոր հողեր բռնազրաւելով,»

Երբեք չէ 10

ՀՐԱՇՔ ԱԻՇԱՐԱՆԸ

Աշտարակի մօտակալ Մուղնիի Ա. Գեորգ վանքին մէջ կը գտնուի Շուրիշգալի աւետարանը, որ աւանդութեան համաձայն, բուժիչ հրաշագոր յատկութիւններ ունի: Այս պատմական տուեալներու, 15րդ դարու պատկանող աւետարանը երկար շրջան մը պահպանուած է Իրանի Փերիա հայահոծ շրջանի Շուրիշգալ գիւղին մէջ: 1970ական թուականներու ներգաղթի օրերուն աւետարանը փոխադրուած է Հայաստան:

Վանքը դարձած է ուխտավայր: Հաւատացեալ բազմութիւնը ժամերով կը սպասէ Ա. Աւետարանը համբուրելու համար: Ըստ ականատեսներու, համբուրելու համար, մտային հիւանդներ, թերաբ մանուկներ եւ ալ հիւանդութիւններէ տառապող անձնու Մ. Աւետարանին հետ հաղորդուելով բուժուած են...

ՄՐՔՈՅ ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՏՕՆԸ

Սրբոց Քառասնից Մանկանց տօնին առիթով Կիրակի, 10 Մարտ 2002ին, աւանդութիւնը յարգուեցաւ անգամ մը եւս, Նոր Մարտի մէջ, թաղին Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ անունը տօնակատարելով՝ ոգեկոչելու համար նահատակ սուրբերու յիշատակը: Շարաթներ առաջ սկսած պատրաստութիւնները, հսկումի Շարաթը կանգեցան հանդիսատար տօնին, որ յատկանշուեցաւ հարսպայի մատուցումով:

Բազմաթիւ ուխտաւորներ, հաւատացեալներ եկեղեցի փութելով իրենց ուխտերը կատարեցին: Սուրբ պատարագը մատուց Նորայր Ժ. վրդ. Աշրգեան: Երգեցողութեան բաժինը կատարեց համանուն եկեղեցւոյ «Նարեկացի» երգչախումբը խմբավարութեամբ Գեորգ Պէպէհեանի:

Պատարագից վարդապետը քարոզեց շեշտը դնելով հաւատքի եւ աւանդութեան պահպանման, աչքի ըլլալի պէս գանոնք պահելու հրամայականին, որովհետեւ առանց հաւատքի կարելի պիտի չըլլայ պահել հաւատը ինքնութիւնը օտար հողերու վրայ, երբ մեր օտարներ տակ չունինք հայրենի հողը, ամէն առաւօտ չենք տեսներ Արարատը մեր դիմաց: Ան գնահատեց եկեղեցւոյ շուրջ համախմբուած կառուցներուն, պատասխանատուներուն ջանքերը եւ կոչ ուղղեց ուխտաւորներուն վերանորոգուելու սուրբերու ոգեկան ներկայութեամբ գոտեպնդուած:

Յետ եկեղեցական արարողութեան, Ս. Քառասնից Մանկանց վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որուն հրաւիրուած էին ու ներկայ եղան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովհաննէս, Պուրճ Համուտի քաղաքպետ Անդրանիկ Մարտիան, շրջանի պատական մարմիններու ներկայացուցիչներ եւ եկեղեցւոյ բարերար ազգայիններ:

Ճաշի ընթացքին ներկայացուեցաւ զեղարուեստական յայտագրի՝ եկեղեցւոյ դպրաց դասին եւ «Նարեկացի» երգչախումբին կողմէ: Իրենց մենբերակներով եւ արտասանութիւններով մասնակցեցան Գեորգ Պէպէհեան, Մանուկ Մանասեան, Յովիկ Քէօշկէտեան, Սիլվի Սիմոնեան, Վազո Նորայրեան եւ Հրակ Պէպէհեան: Մակի Մկրտիչեան արտասանեց Թէքէեանի «Եկեղեցին հայկական»ը, իսկ Կարո Աղազարեան՝ Թէքէեանի «Բարձրացում» քերթուածները:

Նորայր Ժ. վրդ. Աշրգեան հրաւիրուեցաւ իր գնահատական խօսքը փոխանցելու: Ան ուրախութիւն յայտնեց, որ ամէն տարի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ թաղական խորհուրդը, օժանդակութեամբ Տիկնանց յանձնախումբին, դպրաց դասին եւ ազգայիններու, շրջանին մէջ կը ստեղծէ հաւատքի արժանի տրամադրութիւն՝ աւանդութիւնները պահպանելու նախաձեռնողութեամբ: Ան մաղթեց որ օր մը հայ ժողովուրդը կարենայ իր ուխտագնացութիւնը կատարել Առաքելոց վանքին, Մշոյ Մուղնիան Սուրբ Կարապետ վանքին մէջ, աչքերը յարած Արագածի կատարին անպարան կախուած Լոռաւորչի Կանթիւնը:

Իրաւամբ հայուն հոգեկան աշխարհը պայծառացնելու սատարող տօնակատարութիւնը մը եղաւ Սեբաստիոյ Քառասուն Մանուկներու նահատակութեան յիշատակը: Հաւատացեալները մեկնեցան իրենց հետ տանելով մատաղի իրենց բաժինը:

Թ.Պ.ԱԿԻՅ

ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՆՈՐ ԴԵՍՊԱՆԸ ԿԸ ՅԱՆՁՆԷ ԻՐ ՀԱԻԱՏԱՐՄԱԳԻՐՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան 6 Մարտին տեսակցութիւն մը ունեցած է Հայաստանի մէջ Գերմանիոյ նոր նշանակուած դեսպան Հանս Ուուլֆ Պարթեյսի հետ: Մասնակցութեան ընթացքին դեսպանը ստանձնած է իր հաւատարմագրի ներքին: Գերմանիոյ նոր դեսպանը այս առիթով ըսած է, որ տակաւին 80ական թուականներէն ծանօթ է Հայաստանին եւ ուրախ է ներկայացնելու Գերմանիան երկրի մը մէջ, որ ունի հիմնուող քաղաքակրթութիւն, բազմադարեան պատմութիւն, հարուստ մշակոյթ եւ գիտութիւն:

Ան յայտնած է նաեւ, որ Գերմանիան հանդէս կու գայ Հարաւային Կովկասի տագնապներու խաղաղ եւ համապարփակ լուծման օգտին եւ իբրեւ ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ՝ պատրաստ է շարունակելու այդ ուղղութեամբ գործադրուող ջանքերը: Իր կարգին, նախագահ Ռ. Քոչարեան ըսած է, որ Հայաստան յատուկ նշանակութիւն կու տայ Գերմանիոյ հետ գործակցութեան:

«ՅԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅ ՍԵՐՈՒՆԻՆԵՐՈՒ ԴԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Պաղատական եւ համաձայնութեան միջազգային բարեգործական մանկական ֆոնտի նախաձեռնութեամբ, 27 Փետրուարէն 2 Մարտ Մոսկուայի մէջ գործադրուած է «Յանուն ապագայ սերունդներու իրանադրական ընդունակութեան» խորագրով ծրագրի մը, որուն մասնակցած են նաեւ Հայաստանի աշակերտ պատուիրակները, որոնք ընտրուած էին ըստ իրենց հաղորդակցելու հմտութեան եւ լեզուներու խմացութեան:

Ծրագրին մասնակցած են ԱՊՀ անդամ երկիրներու, ինչպէս նաեւ Լեհաստանի եւ այլ երկիրներու ներկայացուցիչներ: Աշխատանքային օրերուն ընթացքին կազմակերպուած են կլոր սեղաններ՝ գիտութեան եւ կրթ

ՄՈՍԿՈՒԱՅԻՆ ՇՐՋԱՆՅԵԼ ՉԻ ՄՏԱՑՈՒԻ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԻԿՈՐ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՑՈՒՄ.- Պարոն Մուրատեան, վրաստանում տեղի ունեցող վերջին իրադարձութիւնները պատճառով շրջանում գործարարութիւնը է առաջացել: Ձեր գնահատմամբ, ինչի՞ հետեւանք է Փանքիսի լեռնանցքում իրականացուելիք գործողութեան շուրջ ռուս-ամերիկեան եւ ռուս-վրացական հակադրութիւնը:

ՊԱՏԱՍՆԱՆ.- Ամէնից առաջ անհրաժեշտ է անդրադառնալ ամերիկեան վարչակազմի քաղաքականութեանը: Պիլ Քլինթոնի կառավարման վերջին շրջանում Միացեալ Նահանգները որոշեցին սահմանափակել իրենց մասնակցութիւնը կեդրոնական Ասիայի երկրներում գաղափարային գործընթացներին: Ըստ էութեամբ, Միացեալ Նահանգները այդ քաղաքականութեան պատճառով Ռուսաստանը կարողացաւ ամբողջովն իր արտադրութեան Պայմանագրի շրջանակներում ընդգրկելով 5 կեդրոնասիական երկրներէջ երեքին, միաժամանակ կարգաւորելով իր յարաբերութիւնները նաեւ Ուզպեքիստանի եւ Թուրքմենիստանի հետ:

Հարաւային կովկասում ազդեցութիւնը թուլացնելու որոշում Միացեալ Նահանգները նախկին վարչակազմը չընդունեցին, որովհետեւ շրջանը աւելի կարեւոր էր: Սակայն այստեղ էլ Միացեալ Նահանգների քաղաքականութիւնը բաւական զուսպ էր: Երբ Ուշինկինում իշխանութեան գլուխ եկան Հանրապետականները, նրանք շարունակեցին այս ուղեգիծը, թէպէտ անվտանգութեան խնդիրների առումով Պուշին ներկայի վարչակազմը համարում է Միացեալ Նահանգների պատմութեան մէջ ամենաբարձրագույնը: Չնայած դրան, մինչ 2001 թուականի Սեպտեմբերի 11ը Միացեալ Նահանգները վարում էին վերոնշեալ քաղաքականութիւնը՝ երկու շրջաններում բաւարարելով հիմնականում տեղեկատուական-հետախուզական բնոյթի գործողութիւններով:

Հ.- Բայց Սեպտեմբերի 11ից յետոյ իրավիճակ փոխուեց:

Պ.- Սեպտեմբերի 11ից յետոյ Ուշինկինում հասկացան, որ երկու շրջաններն էլ խիստ կարեւոր են Համաշխարհային անվտանգութեան հիմնարար խնդիրները լուծման անհրաժեշտ կետերից: Կասպից ծովի քարիւղի եւ կանչի պաշարների արտահանման ապահովումը անհնարին է առանց անվտանգութեան խնդիրների լուծման: Մանաւանդ որ այդ պաշարների շահագործման նկատմամբ լուրջ հետաքրքրութիւն էր դրսեւորում ռուսները: Այս պարտաւորութիւնը սպասումն անսպասուելի ունեցող Չինաստանը: Ռուսաստանը տուեալ դէպքում Միացեալ Նահանգներին մրցակից չէ, քանզի սեփական ուժանիւթի պաշարները արտահանող երկիր է: Վերոնշեալ խնդիրը լուծելու եւ չինական ներթափանցումը կանխելու համար Միացեալ Նահանգներին անհրաժեշտ էր կեդրոնական Ասիայում մշտական ռազմական ներկայութիւնը: Հնդկական ուղիներում գտնուող Տիբեթի Կարսիս խարխիւր, ռազմական խարխիսները Միացեալ Արաբիայում եւ Օմանում այդ խնդրի լուծումը չէին ապահովում հեռավորութեան պատճառով:

Հ.- Դրա համար Միացեալ Նահանգները մտան Աֆղանիստան:

Պ.- Աֆղանիստանի իսկապէս ահաբեկչութեան օճախ էր, բայց դա ոչնչացնելու համար էլ կեդրոնական Ասիայում խարխիսներ էին անհրաժեշտ:

Այդ նպատակը մասամբ իրագործուեց եւ հիմա արդէն կայ որոշում Ուզպեքիստանի տարածքում Միացեալ Նահանգների ռազմական խարխիսները հիմնելու մասին: Ուշինկինի ճիշդ է կողմնորոշուել՝ որպէս յենարան ընտրելով կեդրոնական Ասիայի ամենաուսեղ պետութիւնը, որը տնտեսապէս ինքնաբաւ է, 5 երկրներէջ միակն է, որ ունի կայացած գինեւած ուժեր եւ ձգտում է հանդիս գալ իբրեւ շրջանային գերտէրութիւն:

Հ.- Խըրիսը գիտատնում, Տանկիստանում եւ Ղազախստանում ամերիկեան ռազմական Ղեկավարութիւնը չի՞ պահպանուելու:

Պ.- Կարծում եմ՝ ոչ: Ամերիկեան ինքնաթիռները այնտեղից դուրս կը բերուեն: Դրանք ԱՊՀի Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի անդամ երկրներ են, բացի այդ, այնտեղ գինեւած պահելու իմաստ չկայ: Երկրների վերահսկողութիւնը կարելի է ապահովել նաեւ Ուզպեքիստանի միջոցով՝ դրանով կանխելով գերտէրութիւն գառնալու Չինաստանի յաւակնութիւնները:

Հ.- Իսկ Հարաւային կովկասում:

Պ.- Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ երկար տարիների ընթացքում Մոսկուայի եւ Ուշինկինի միջեւ առկայվեցին խնդիրը մեր շրջանում Պաքու-ձէյջան քարիւղատարի վարձքն էր: Այդ ծրագիրը մի քանի նշանակութիւն ունի: Դրա իրականացման մէջ

շահագրգռուած են Միացեալ Նահանգների, աւելի ստոյգ՝ Պուշին վարչակազմի յենարանը Հանդիսացող Թեքսասեան քարիւղի ընկերութիւնները, բրիտանական «Պրիթչ Փեթրոլիում» քարիւղի ընկերութիւնը, ինչպէս նաեւ քարիւղի պահանջարկ ունեցող Թուրքիան եւ Իսրայէլը: Քանի որ ծրագրի իրականացումը չէր յաջողուում հիմնականում Ռուսաստանի դիմադրութեան պատճառով, բոլոր այս շահագրգիռ կողմերը արդէն երկու տարի լուպիլնիկի աշխատանք են տանում Մոսկուայի համաձայնութիւնը ստանալու համար: Այստեղ պէտք է հաշուի առնել, որ ռուսական որոշ քարիւղի ընկերութիւնները ղեկավարները ազգութեամբ հրեաներ են, ինչը հնարաւորութիւն ստեղծեց չփոփոխելի հաստատման:

Արդիւնքում, կարծես, ձեռք է բերուել պայմանաւորուածութիւն, որ Ռուսաստանը եւս կ'ընդգրկուի Պաքու-ձէյջան քարիւղատարի ծրագրում, ըստ որում, այդ ճանապարհով կ'արտահանուի նաեւ ռուսական քարիւղ, ինչը կը բարձրացնի նախագծի տնտեսական նպատակադրութիւնը: Սակայն առաջացել է մէկ հակասութիւն. Միացեալ Նահանգների վարչակազմի համար այս ծրագիրը ունէր նաեւ արտաքին քաղաքական նշանակութիւն: Եթէ Ռուսաստանը մասնակցի այնտեղ, այլեւ հնարաւոր չի լինի Հարաւային կովկասը պոկել Ռուսաստանից: Ընդհանրապէս՝ Մոսկուան ձեռք կը բերի Արզպէյջանի եւ Վրաստանի վրայ ազդելու լրացուցիչ լծակներ:

Միացեալ Նահանգների վարչակազմը դա չի ցանկանում, բայց քարիւղի ընկերութիւնները գիտակցում են՝ ուժանիւթի փոխադրման անվտանգութիւնը կեդրոնական Ասիայում եւ Հարաւային կովկասում կարող է ապահովել միայն Ռուսաստանը: Քարիւղի ընկերութիւնները, Մեծն Բրիտանիան, Թուրքիան ու Իսրայէլը համաձայն են այս ծրագրի ապաքաղաքականացմանն ու նոյնը պահանջում են Պուշին վարչակազմից:

Կարծում եմ՝ ամերիկացիներն, ի վերջոյ, ընդունելու են, որ առանց Մոսկուայի այս ծրագրերն իրականացնել հնարաւոր չէ:

Հ.- Եթէ այդպիսի պայմանաւորուածութիւններ կան, ինչո՞վ բացատրել Փանքիսի լեռնանցքի հետ կապուած այս ողջ պատմութեան շուրջ յայտարարութիւնը: Նշանակում է Ռուսաստանն ու Միացեալ Նահանգները այնքան էլ համատեղ չեն գործում:

Պ.- Միացեալ Նահանգներում եւ Ռուսաստանում արտաքին գործոց նախարարութիւններն եւ ռազմական գերատեսչութիւններն միջեւ լուրջ հակասութիւններ կան: Օրինակ՝ Փենթագոնը ձգտում է մեծացնել իր գերակատարութիւնը արտաքին գործընթացներում, նոյնպիսի միտում է կայ նաեւ ռուսական բանակում: Փանքիսի լեռնանցքում իրականացուելիք հակահարձակող գործողութեան հետ կապուած կայ ոչ թէ յստակ, այլ սկզբունքային ռուս-ամերիկեան պայմանաւորուածութիւն: Այսինքն՝ ամերիկացիները մասնակցում են Փանքիսի գործողութեանը, իսկ դրա դիմաց ռուսները պահպանում են Վրաստանում, որոշակիորէն Պայմանում եւ Ախաբալաքում տեղեկատուութիւնը իրենց երկու ռազմական խարխիսները: Այդ իսկ պատճառով համարում ենք Տմիթրի Ռակոֆինի եւ Միխայիլ Լէոնիճեի կողմից Վրաստանի մասնատման վերաբերեալ կանխատեսումներին: Եթէ դրա համար իրական հիմքեր լինէին, ապա ռուս գինեւորականները այդքան հանգիստ չէին լինի: Հետեւապէս նրանք տեղեկ էին Փանքիսում գործողութիւններ իրականացնելու ամերիկացիների մտադրութեանը:

Վերջին օրերի իրավիճակը ցոյց տուեց, որ Ռուսաստանի քաղաքական ղեկավարութիւնն այս ամէնն օգտագործեց իբրեւ առիթ՝ մէկ անգամ եւս ճնշում գործադրելու Վրաստանի վրայ: Մինչդեռ, կրկնում եմ, ռուս-ամերիկեան սկզբունքային պայմանաւորուածութիւնը գոյութիւն ունէր, միայն որոշ մանրամասնութիւններ ամերիկացիները պիտի համաձայնեցնէին Վրաստանի հետ: Ռուսաստանը Վրաստանում վերցնելու ոչինչ չուներ, բացի երկու խարխիսների պահպանման խնդրից, որովհետեւ Արխաղիան, Աճարիան եւ Հարաւային Օսիան, ըստ էութեան, Մոսկուայի վերահսկողութեան ներքոյ են:

Հ.- Ստացում է, որ շրջանը փոխադարձ համաձայնութեամբ բաժանուած է ռուսական եւ ամերիկեան ազդեցութեան գոտիների:

Պ.- Տարիներ առաջ մի խորհրդաժողովում, ուր ներկայ էին Ռուսաստանի քաղաքական վերահսակի բազմաթիւ ներկայացուցիչներ, ես առաջարկեցի, որ կեդրոնական Ասիայում իրանի եւ Ռուսաստանի միջեւ իրականացուի գործառնոյթների բաժանում: Առաջարկի էութիւնն այն էր, որ անվտանգութեան մասով այդ շրջանով զբաղուի Ռուսաստանը, գաղափարաստ-

կան ազդեցութիւնը իրականացնի իրանը: Յաւոք, երկու կողմն էլ հրաժարուեցին դրանից, մինչդեռ եթէ շրջանը գաղափարապէս լինէր աւանդական իսլամի ազդեցութեան տակ, ոչ մի վահագիզմ էլ չէր գաղափար: Հիմա արդէն Միացեալ Նահանգները Հարաւային կովկասում եւ կեդրոնական Ասիայում Մոսկուայի վզին փաթաթեցին հէնց ազդեցութիւնների գործառնութիւնը բաժանումը:

Հ.- Ինչպէ՞ս է դա արուելու:

Պ.- Ընդհանուր առաջաբարձական խորագրակերպ, հիմնարար հարցերը անվտանգութեան բնագաւառում որոշելու է Ռուսաստանը: Ռազմական ներկայութեան տեսակէտից գարձեալ ռուսերն են լինելու գերիշխող: Իսկ ամերիկացիները լուծելու են գործնական խնդիրները:

Հ.- Ի՞նչ ասել է «գործնական խնդիրներ»:

Պ.- Ահաբեկչութեան եւ արմատականութեան դէմ պայքար, աշխարհատնտեսական ծրագրերի անվտանգութեան ապահովում:

Հ.- Այդ բաժանումը տարածուելու է նաեւ Հայաստանի վրայ:

Պ.- Առաջմ այդպիսի միտում տեսնելի չէ: Որովհետեւ Հայաստանն իսկապէս յատուկ դէպք է: Ի տարբերութիւն Վրաստանի եւ Արզպէյջանի, որոնք սկզբունքորէն չեն հանդիսանում Ռուսաստանի գործընկերները եւ ձգտում են դէպի Արեւմուտք, Հայաստանը ե՛ւ Մոսկուայի, ե՛ւ Ուշինկինի, ե՛ւ որոշ չափով իսլամական աշխարհի գործընկերն է:

Այս գործընթացներում մեր բախտն, իսկապէս, բերեց: Որովհետեւ խոչորագոյն քարիւղի ընկերութիւնները, խոչոր երկրների կառավարութիւններում եւ ռազմական գերատեսչութիւններում համարկուած վերլուծաբանները միանշանակ յանգել են այն ճիշդ եզրակացութեանը, որ դարաբարեան խնդիրը չի հանդիսանում իրենց առեւտրական - հաղորդակցական - քարեղային ծրագրերի իրականացման խոչընդոտ: Այդ իսկ պատճառով Հարաբարի հարցը կողքել է իր հետաքրքրութիւնը ե՛ւ Ռուսաստանի, ե՛ւ Արեւմուտքի, մասամբ նաեւ Իրաքի հասարակութեանը: Թուրքիայի մասին, ի հարկէ, դժուար է նման բան՝ ասել, որովհետեւ նա իր առանձնակի շահերն ունի այստեղ:

Հ.- «Բայտը բերել» ասելով՝ ի՞նչ կկատուի եւ հակառակ դէպքում ի՞նչ էր սպանում Հայաստանին:

Պ.- Հարաբարը չզարձաւ Չեչենիա: Ստացել ենք իրական հնարաւորութիւն շարունակել Հարաբարում կառուցել եւս մի անխախտ շարական հանրապետութիւն: Ըստ էութեան, բոլորը հրաժարուում են այդ հարցին անդրադառնալուց, այդ խնդրով զբաղուելուց: Այս խորապատկերի վրայ պատահական չէ, որ Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութիւնում Հայաստանով եւ Հարաբարով այլեւս չեն զբաղում նախկին արհեստավորները, իսկապէս շատ լուրջ մասնագէտներ, որոնք զբաղում էին մինչ Գի Ուշինկին: Հիմա հայկական մասով զբաղուած են խաղաղասէր, հանգիստ մարդիկ՝ առանց մեծ յաւակնութիւնների: Եւ Աշխի Մինսքի խորում Միացեալ Նահանգների նոր ներկայացուցիչ է նշանակուել Մոլտովիայում նախկին ղեկավարը, որը յաջողութեամբ այդ երկիրը յանձնեց համայնավարներին: Սա թերեւս նրա վերջին նշանակումն է թոշակի անցնելուց առաջ եւ, իմ տպավորութեամբ, նա եւս յաւակնոտ մարդ չէ:

Հայաստանում Միացեալ Նահանգների նոր դեսպանը լաւ գիտի Ռուսաստանը եւ հաւանաբար նրա գործառնոյթը ոչ թէ հայ ամերիկեան յարաբերութիւնները կարգաւորելն է, այլ Հայ-ռուսական եւ հայ-իրանական յարաբերութիւններին հետեւելը, ինչը դիւանագիտական խնդիր չէ, այլ քաղաքական: Այս ամէնը ցոյց է տալիս, որ մեր նկատմամբ հետաքրքրութիւնն իսկապէս նուազել է եւ դա լաւ է:

«Հայաստանի քաղաքական ղեկավարութեան ձեւաւորման հարցը մեր լուծելիք հարցն է: Մեզ համար շատ բարենպաստ ներկայ պայմաններում ո՞չ Միացեալ Նահանգները, ո՞չ Ռուսաստանը մեծ լծակներ եւ առանձնակի ցանկութիւն էլ չունեն միջամտելու Հայաստանի, Արզպէյջանի, անգամ Վրաստանի ներքին գործերին, եթէ իրենց շահերը վտանգուած չեն: Որովհետեւ այդպիսի միջամտութիւնը նաեւ ենթադրում է լուրջ պարտաւորութիւնների ստանձնում: Իսկ այդպիսի պատասխանատուութիւն ո՞չ ունենք, ո՞չ էլ ամերիկացիները չեն ցանկանայ վերցնել: Այս պայմաններում մեր հասարակութեան մէջ պէտք է ստեղծել այնպիսի միջոց»

«Հայոց Աշխարհ»
Շարք՝ էջ 8

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԳԱԼԻՍ ՎՐԱՍԱՍ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՆԱՐԱՒՈՐ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

Վերնագրում արտայայտուած հարցի պատասխանը արտաբուստ պարզ է՝ գալիս են վրացական բանակի «մի քանի գումարտակ նախապատրաստելու Փանքիսի կիրճում հակահարձակական գործողութիւններին»: Այդպիսին է թէ՛ ամերիկեան, թէ՛ վրացական պաշտօնական մեկնաբանութիւնը: Բայց այստեղ մի շատ էական հարց էլ կայ՝ այդ առաջմ ենթադրեալ հակահարձակական գործողութիւնից յետոյ ամերիկացի զինուորականները ե՞րբ են գալու քայլու Վրաստանից: Եւ երբեւէ դո՛ւրս են բախու: Գոնէ նա չեմ յիշում, թէ ամերիկացիները երբեւէ կամաւոր (ընդգծում եմ՝ կամաւոր) դուրս եկած լինեն որեւէ երկրից, ուր ինչ-որ պատճառով ինչ-որ ժամանակ մտել են:

Համաշխարհային տիրապետութեան մարմալն ահա արդէն երկար ժամանակ բնորոշ է այս երկրին: Դեռ օրօրցից իւրաքանչիւր ամերիկացու ներշնչում են, թէ իրենց երկիրը «յատուկ առաքելութիւն» ունի աշխարհում կատարելու: Այսօր այդ «առաքելութեան» տակ թմբկահարուում է ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների պաշտպանութեան, այլոց ազատութիւնների երաշխաւորը լինելու առաջմարտիկի «պարտաւորութիւնը»: Թէ՛ ո՞վ է Միացեալ Նահանգների վրայ դրել այդ պարտաւորութիւնը՝ Աստուծոն է յայտնի: Նոյնիսկ իրենք իրենց համոզել են, թէ դա իրօք Աստուծոյ կողմից իրենց վերապահուած «իրաւունք» է ու «պարտականութիւն»: Իսկ որ այդ կերպ ընդամենը արդարացուած է երկիր մոլորակ ցանկացած ծայրում այլոց գործերին միջամտելու, աշխարհի ժողովուրդներին «խելք սովորեցնելու», իրենց արժէքները ուրիշներին պարտադրելու անթաքոյց ձգտումը, կարծում եմ, տեսնելի ու հասկանալի է արդէն ոչ միայն դպրոցականներին, այլեւ նախադպրոցականներին:

Ես շատ հեռու եմ Միացեալ Նահանգները համաշխարհային խորքի կայսրութիւն համարելու մտայնութիւնից: Բայց համոզուած եմ, որ ոչ միայն ես, այլեւ մոլորակի միլիարաւոր այլ, ինձ նման շարքային մարդիկ անսահման շնորհակալ կը լինէին նոյն Միացեալ Նահանգներին, եթէ վերջիններս հանգիստ թողնէին իրենց, յարգէին սեփական ճակատադիրը սեփական հայեցողութեամբ տնօրինելու, սեփական արժէքներով ապրելու իւրաքանչիւրի իրաւունքը: Այո, ամերիկացիներից սովորելու շատ բան կայ ե՛ւ հասարակութեան կենսագործունէութեան կազմակերպման, ե՛ւ մարդու իրաւունքների պաշտպանութեան, ե՛ւ ժողովրդավարական արժէքների արմատաւորման, ե՛ւ բազմաթիւ այլ առումներով: Միացեալ Նահանգները կարող են իրենց լաւ օրինակով, իրենց անտառածն տնտեսական օգնութիւններով շատ չտեսնի երախտագիտութեան արժանանայ, եթէ միայն բաւարարուին... օրինակ ծառայելով: Ամբողջ դժբախտութիւնն այն է, որ Միացեալ Նահանգները իրենց պատմութեան մէջ երբեք չեն բաւարարում դրանով: Զոռով-շառով միշտ փորձել եւ այլոց հարկադրել, որ... երջանիկ պրոբլէմ: Ի հարկէ, «երջանկութեան» ամերիկեան պատկերացումներով: Եւ այս հարկադրանքն է, որ միշտ առաջացել եւ առաջացնում է... հակակրօն, ներքին դիմադրութիւն, հակազդելու ձգտում: Այս պատճառով է, որ ամերիկացիներին աշխարհի շատ անկիւններում պարզապէս չեն սիրում, եթէ նոյնիսկ չեն համարձակուում դա բարձրաձայն արտայայտել:

Եթէ աչքի առաջ ունենանք հոգեբանական այս խորապատկերը, ապա մեզ ամենեւեւ տարօրինակ չի թուալ այն բառացիորէն ջղաձիգ հակազդեցութիւնը, որ առաջացաւ նախ եւ առաջ Ռուսաստանում՝ ամերիկացիների վրաստան մտնելու մտադրութեան լուրը առնելու պէս: Բացառութեամբ նախապէս Փուլթինի, մոսկովեան միւս բոլոր թէ՛ թէ՛ շատ աչքի ընկնող քաղաքական գործիչները, սկսած արտաքին գործոց նախարար Իվոյր Իվանովից, վերջացրած Պետական Տուժալի արտաքին յարաբերութիւնների յանձնարարման ինստիտուտի ղեկավար Ռակոֆինով, աւել կամ պակաս ուսուր պարտաւորութիւններով յայտնեցին իրենց խիստ բացասական վերաբերմունքը: Ինչո՞ւ:

1. Չեն հաւատում (եւ ամենեւեւ ոչ առանց հիմքի), թէ ամերիկացիները միանգամայն «յարգելի» պատճառներ չեն գտնի Վրաստանում (եւ ոչ միայն այնտեղ) իրենց ռազմական ներկայութիւնը անվերջ երկարաձգելու եւ մեծացնելու համար:
2. Համոզուած են, որ անկախ այսօրուան նախահարցից, ամերիկացիների ռազմավարական նպատակը եղել ու մնում է ռուսներին կովկասից (եւ յետխորհրդային այլ պետութիւններից) ընդհանրապէս դուրս մղելը:

Մանաւանդ վերջին պարագայում ռուսներն իրենց երկրի ապագայի համար տագնապելու առաւել քան բաւարար հիմքեր ունեն:

Իսկ մե՞նք: Հայաստանի նախագահի եւ պաշտպանութեան նախարարի առաջին արձագանքները հանգստացուցիչ էին: Նախ, ամերիկացիները, եթէ նոյնիսկ երկար, անգամ ընդմիտ մնան Վրաստանում, մեզ համար սպառնալիք չեն, բարեկամ երկիր են: Երկրորդ, ամերիկացիները չեն կարող ունենալ շրջանում հաստատուած ուժերի հաւասարակշռութիւնը խախտելու շարագոյթ նպատակներ:

ՌԱՅԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
«Ազգ»
Շարք՝ էջ 8

Միջապգային Քաղաքական Կեանք

ԱՆՈՐԱՆՈՐԸ

ԱՀԱԲԵԿԶՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԻՏԱԿԻՆ ՏԱԿ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐ...

Անցնող շաբաթներում Միացեալ Նահանգներ անգամ մը եւս վերանորոգեցին մեծաշունչ առաքելութեամբ մը շարքին արհաբեկչներու ձեռքերէն փրկելու իրենց ուխտը: Վրաստանի Փանքիսի կիրճին մէջ «Քալիտա» զինեալներու պատանգ զօտ ըլլալու նորագոյն տեղեկութիւններուն լոյսին տակ, Ուաշինկթըն անմիջապէս գործի յօնեցաւ եւ իր ուժերը առաքեց Կեդրոնական Ասիա: Ամերիկացի զինեալներ արդէն իսկ ներկայութիւն են Ուզպէքիստանի եւ Խրըսթըրիստանի մէջ, եւ Ուաշինկթըն որոշած է յաջորդող 6 ամիսներուն 64 միլիոն տոլար տրամադրել մօտաւորապէս 1500 վրացի զինուորներու մարզումին, ինչպէս նաեւ Վրաստանին հայրաքաղաքէն դէպքեր ու ուղղաթիւներ «Քալիտա» զինեալները այդ երկրէն արմատախիլ ընելու համար:

Այս բոլորը բնականաբար հանելի պիտի չբուլին Վրաստանը իր ազդեցութեան շրջանակին մէջ նկատող Ռուսիոյ: Մոսկուա արդէն իսկ իր պատրաստակամութիւնը յայտնած է Վրաստանի հետեւին - արեւելեան սահմանին վրայ գտնուող Փանքիսի կիրճին հարցը լուծելու, սակայն Փետրուար 18ին նախագահ Շեւարտնաձէ Փանքիսի մէջ ուսուցանող գործողութեան մը գաղափարը «անընդունելի» նկատեց եւ նախընտրեց ապաւինել ամերիկեան ուժերուն: Արեւմտամէտ վրացական իշխանութիւններուն Ռուսիոյ հետ գործակցութեան կտրուկ մերժումը բնաւ գարմանալի չէր, այլ առելին՝ սպասելի: ՕԹԱՆի անդամակցութեան ձգտող Վրաստանը իր բանակին եւ զինուորական մարզին ֆինանսաւորումը գրեթէ ամբողջովին վստահած է Արեւմտեային: Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտի Դեկտեմբեր 2001ին Վրաստան այցելութեամբ, երկու երկիրներուն միջեւ կնքուեցան զինուորական եւ արհեստագիտական օժանդակութեան յաւելեալ համաձայնագիրներ: Արդարեւ, Ռամսֆելտ Փենթագոնի կողմէ խոստացաւ 15 միլիոն տոլար արժող զինուորական 10 բեռնատար ուղղաթիւներ արժող տրամադրել Վրաստանին եւ 34 վրացի օդաչուներ ու մասնագէտներ մարզել Միացեալ Նահանգներու մէջ:

Հակառակ անոր որ Ռուսիա պաշտօնապէս մերժած է Վրաստանի մէջ ամերիկեան ուժերուն ներկայութիւնը, ուստի պաշտօնապէս քանի մը առիթներով վերապահութիւն յայտնած են այդ գծով: Արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով դիտել տուած է, թէ Ռուսիոյ ազգային շահերուն համար Կովկասի շրջանը յատուկ կարեւորութիւն ունի, եւ հոն կատարուած բոլոր գործողութիւնները «անընթաց» չեն մնար Ռուսիոյ կողմէ:

Վրաստանը իր ազդեցութեան գօտիին մէջ պահելու Ռուսիոյ որոշումը ի յայտ կու գայ նաեւ Պա-

բումի եւ Ախալքալաքի մէջ զինուորական իր խարխիւները պահելու մտադրութեան: Սակայն այս մէկը չի նշանակեր, որ Ռուսիա կը շարունակէ ըլլալ Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ ազդեցիկ ուժը: Ընդհանրապէս, Վրաստանի մէջ ամերիկեան ուժերու ներկայութեան առիթ տալով՝ Ռուսիա լռելեայն ընդունած կ'ըլլայ այդ երկրին վրայ իր հետըզհետէ նահանջող հեղինակութեան իրողութիւնը:

Պահ մը մոռնալով այս բոլորը՝ հարկ է հարցնել, թէ Միացեալ Նահանգներ պատրաստ են այդքան մեծ գումարներ ծախսել միայն «Քալիտա» զինեալներ հետապնդելու համար, մանաւանդ նկատի առած, որ ամերիկացի պաշտօնատարի մը համաձայն, այդ զինեալներուն թիւը «առնուազն 12» է: Այս հարցումին ժխտական պատասխանը յստակ կը դառնայ այն երեւոյթով, որ շրջանին մէջ իրենց ներկայութեան շնորհիւ Միացեալ Նահանգներ հանելի գուզադիպութեամբ մը պիտի կարենան դիրացնել քարիւղատար մը շինելու իրենց ծրագիրին իրագործումը: Ասկէ անկախ, շատերու ծանօթ իրականութիւն է, որ Փանքիսի կիրճին մէջ տարիներէ ի վեր (յատկապէս 1994-1996) Չէչենիոյ առաջին պատերազմէն ետք գոյութիւն ունին չէչեն անջատողականներ եւ իսլամ ծայրայեղականներ, սակայն այդ գծով Միացեալ Նահանգներ մինչեւ օրս անտարբեր մնացած են:

1990ական թուականներէն ի վեր Միացեալ Նահանգներ ձգտած են Կեդրոնական Ասիոյ մէջ իրենց սեփական քարիւղատար ունենալ եւ չափաւիցի Պաքուէն Չէչենիա եւ ապա Սեւ ծով անցնող ուսուցանող խողովակին: Միացեալ Նահանգներու վարչակարգը եւ ամերիկեան քարիւղի հանրածանօթ ընկերութիւնները իրենց ծրագիրներուն մէջ յաճախ նկատի առած են Վրաստանն ու Ազրպէյճանը՝ իրեն առաջնահերթ երկիրներ, ուրկէ կրնայ անցնիլ այդ քարիւղատարը: Այս մէկը կ'արտօնէ Միացեալ Նահանգներուն, որ հասնին Կեդրոնական Ասիոյ քարիւղին եւ իրենք ոչ թէ Ռուսիա հսկանք քարիւղի եւ քարիւղատարներու գիններուն: Յստակ է, որ Վրաստան ուժեր դրկելով՝ Միացեալ Նահանգներ քարիւղի կարողութիւնը արարք մը չէ, որ կը կատարեն, այլ կը փորձեն իշխել շրջանի քարիւղին կէ այս իմաստով՝ տկարացնել Ռուսիոյ ազդեցութիւնը:

«Քալիտա» զինեալները հետապնդելու եւ այդ ցանցը տկարացնելու պատրուակով Միացեալ Նահանգներ 6 ամսուան ընթացքին մուտք գործեցին Աֆղանիստան եւ Ֆիլիպիններէն, իսկ այժմ կը բափանցեն Վրաստան եւ Եմէն: Հետաքրքրական է, որ յաջորդող ամիսներուն ուրիշ քանի երկիրներու մէջ ամերիկեան խարխիւներ պիտի հաստատուին:

Հ. ԱՅԻՍԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ՎՐԱՅԻ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐ Կ'ԱՆՑՆԻՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԻՒ «ՈՉ ՄԻԱՅՆ ՓԱՆԵՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԸՆՄԱՐ»

Վրաստանի մէջ ամերիկացի զինուորական մասնազգէտներու հաստատման Ռուսիոյ դժկամ համաձայնութիւնը ստանալով, Ուաշինկթընն եւ թիֆլիսէն պաշտօնատարներ մարզումի ծրագիրներու վերջին մանրամասնութիւնները կը ճշգրտեն այս օրերուն:

Մարտին սկիզբը, Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ պաշտպանութեան նախարարները՝ Տոնըլտ Ռամսֆելտի եւ Սերգէյ Իվանովի միջեւ հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին աւելի յստակ դարձաւ Վրաստանին տրամադրութիւնը ամերիկեան օժանդակութեան ընդմիջը: Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութեան համաձայն, համագործակցութեան առաջին հանգրուանը, որուն ծիրէն ներս անցեալ Հոկտեմբերին թիֆլիսի տրամադրութեան զինուորական ուղղաթիւներ եւ օդաչուներու համապատասխան մարզում, արդէն իր աւարտին կը հասնի:

Յաջորդ հանգրուանին պիտի ստեղծուի եւ համապատասխան մարզումներ պիտի ստանայ վրացական շտապ միջամտութեան ուժ մը, մասնագիտացած՝ հակահարձակական գործողութիւններու մէջ: Վրաստանի պաշտպանութեան փոխ նախարար Կելա Պետեաշվիլի «Կովկաս» լրատու գործակալութեան յայտնեց, թէ մարզումներու նախագիծը պատրաստուած է 2001ի վերջերս: Աւելի քան հազար վրացի պաշտօնատարներ եւ զինուորներ պիտի հետեւին մարզումի անջատ ծրագիրներու, երկրին տարածքին զանազան բանակայրերու մէջ, ըսաւ Պետեաշվիլի: Միացեալ Նահանգներ նաեւ պիտի տրամադրեն պատրաստուող ուժերուն գումակային սարքերը:

Մօտ 200 ամերիկացի մասնագէտներ պիտի հսկեն մարզումներուն: ՕԹԱՆ Շաւրքաշվիլի, վրացական հարցերու գծով Տոնըլտ Ռամսֆելտի խորհրդականը, հաւանաբար Վրաստան ժամանէ Մարտի վերջերս: Համակարգելու համար մարզումի ծրագիրին աշխատանքները:

Փետրուար 27էն, ամերիկեան ուժերու Վրաստան հաստատման մասին առաջին հաղորդումէն ի վեր, թէ՛ ամերիկացի եւ թէ՛ վրացի պաշտօնատարներ կ'աշխատին փարատել այն մտահոգութիւնը, թէ ամերիկեան ուժերուն ժամանումը կրնայ ազդեցութիւն ունենալ շրջանի ապահովութեան վրայ: Թիֆլիսի իշխանութիւնները կ'ուզեն շարունակական գործընթացի մը դրոշմակա նպատակները ձգելը, այստարբերով, թէ ամերիկեան ուժերուն հաստատումը կը բխի ՕԹԱՆի «գործընկերութիւն յանուն խաղաղութեան» ծրագիրին հետ Վրաստանի գործակցութեան:

Հակառակ այս հաստատեցումներուն, միեւնոյն պաշտօնատարները կը խոստովանին, որ այժմու պայմանները յանկարծակի փոփոխութիւններու ենթակայ են: Վրաստանի պաշտպանութեան նախարարութեան բանբեր Միրիան Ֆիքնատէէի համաձայն, համագործակցութեան սկզբնական ծրագիրներուն գործնականացումը «աւելի արագ ընթացք կրնայ ստանալ եւ անոր մանրամասնութիւնները նշանակալից ձեւով կրնան փոխուիլ»:

Կարգ մը մեկնաբաններ տակաւին մտահոգ են Վրաստանի կայունութեան, այն համոզումով, որ ամերիկացի փորձագէտներուն ժամանումը անկայունութեան յաւելեալ ազդակ մը կը ստեղծէ Կովկասի քաղաքական չափազանց պայնուցիկ իրավիճակին մէջ: Մտահոգութեան «առիւծի բաժին»ը կ'առնչուի երկար տեւողութեան վրայ ուսուցանող հակադարձութեան: Վրացի մեկնաբաններ դիտել կու տան, որ Ռուսիա տակաւին խարխիւներ ունի վրացական հողերու վրայ:

Բացայայտ է, որ ուսուցնողներ խանդավառ չեն ամերիկեան ուժերու ժամանումով, այսուհան-

ՃԱՊԱ ՏԵՒՏԱՐԱՆԻ

«Նուրեմբերգ»

Շաբ.ը Էջ 8

ՄՂԵԼ ՊԱՏԵՐԱԶՄՄԸ, ՈՐ ԻՍՐԱՅԵԼ ԶԻ ԿՐՆԱՐ ՅԱՂԹԵԼ



Անկալապ պաղեստինցիներ իսրայէլացի զինուորներու հսկողութեան տակ

Սէուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալլային կատարած խաղաղութեան առաջարկը աւելի քան մէկ տարիէ ի վեր միակ դրական գարգացումն է միջին արեւելեան ողբերգութեան մէջ: Սակայն այդ առաջարկին յաջողութեան կարելիութիւնը նահանգներուն նեցուկը ապահովուի, ինչ որ անառաքար կը պաշտպանելը ամերիկեան քաղաքականութեան ղէմ առնուած իրաւունքը» եւս կրնայ զիջումներու շարքին ըլլալ: Շատերու համար ընկալելու ձեւը այն պիտի ըլլար, որ որոշ թիւով ազգայնականներ վերադառնալին իրենց տունները, իսկ մնացեալը ստանալին նիւթական հաստատութիւնը եւ ընկալութիւնը հաստատելին այլուր:

Միացեալ Նահանգները, մինչեւ օրս այդ հողերը ճանչցած չեն իբրեւ իսրայէլի օրինական մէկ բաժինը:

Միացեալ Նահանգները, մինչեւ օրս այդ հողերը ճանչցած չեն իբրեւ իսրայէլի օրինական մէկ բաժինը:

Միացեալ Նահանգները, մինչեւ օրս այդ հողերը ճանչցած չեն իբրեւ իսրայէլի օրինական մէկ բաժինը:

Միացեալ Նահանգները, մինչեւ օրս այդ հողերը ճանչցած չեն իբրեւ իսրայէլի օրինական մէկ բաժինը:

Միացեալ Նահանգները, մինչեւ օրս այդ հողերը ճանչցած չեն իբրեւ իսրայէլի օրինական մէկ բաժինը:

Միացեալ Նահանգները, մինչեւ օրս այդ հողերը ճանչցած չեն իբրեւ իսրայէլի օրինական մէկ բաժինը:

Միացեալ Նահանգները, մինչեւ օրս այդ հողերը ճանչցած չեն իբրեւ իսրայէլի օրինական մէկ բաժինը:

նութեան կը դիմեն: Անցեալ տարի համոզուած ըլլալով, որ իրենք իրենց կրցածն աւելին տուած են պաղեստինցիներուն (հաւանաբար նաեւ օրուան վարչապետ Էհուդ Պարաքին փափաքածն աւելին), իսրայէլացիներու պատրաստ էին լսելու Արիէլ Շարոնի այն խոստումը, թէ ինք կրնայ ճնշումներու ճամբով վերջ դնել վայրագութեան: Իսրայէլացիները հաւատացին անոր, սակայն ան ձախողեցաւ, եւ ներկայիս փողովուրդին ու մամուլին մեծ մասը դէմ է իրեն:

Խաղաղութեան ի նպաստ շարժումը դարձեալ աշխուժացած է: Բանակը, որ կը բաղկանայ քաղաքային զինուորներէ, տաքնապի մէջ է՝ աւելի քան 500 պահեստի զինուորներ եւ ենթասպաններ կը մերժեն մասնակցիլ այդ անբարոյ պատերազմին:

Վարչապետը երկիրը առաջնորդած է դէպի բառապարտ անել: Ան երկու հաւանական քայլեր կ'առաջարկէ. մէկը՝ անգործնական, իսկ միւսը՝ իսրայէլի բարոյականութեան ինքնուրույն:

Առաջինը՝ արմատական բաժանումն է. սահմաններ, խրատներ, նոյնիսկ՝ կականներ: Այս մէկը արդէն որոշ չափով սկսած է կատարուիլ, սակայն ամբողջական բաժանումը ոչ նիւթական պէս եւ ոչ ալ տնտեսապէս կարելի է, մանաւանդ՝ աւելի մեկուսի շրջաններուն համար:

Միւս կարելիութիւնը պաղեստինցիները բռնութեամբ Պաղեստինէն դուրս քշելն է, այլ խօսքով՝ ցեղային մաքրագործում կատարելը: Հրեայ կարգ մը ծայրայեղապետներ համաձայն են ասոր եւ այս հարցը ներկայիս բանավեճերու նիւթ է: Դէտերու համաձայն, այդ մէկը բուռնցքի հարուած մըն է իսրայէլեան փողովուրդավարութեան: Մարդկութեան դէմ ոճիրը՝ քաղաքական ընտրանք:

Ոչինչ կարելի է զանազան: Ասիկա պատեւապէս մըն է, գործարար լի իսրայէլեան քաղաքականութեան պատկանող հակառակ կարողութիւնը:

Տկարներուն ուժը կը կայանայ գորակորներուն իրենց վատթարագոյնը ընել տալուն մէջ: Իսրայէլը ընելով՝ անոնք գորակորները կը քաշեն դէպի վար, ուր անոնք կամ կ'երկման են կը կործանին կամ ալ՝ բարոյական անձնասպարէսները, այլ իսրայէլը:

ՌԻԼԻԸՄ ՓՅԱՅ

«Ինքընդէն շերտ թրիպիւրն»

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԲԱԶԻՍԻՐ Դ. ԹԱԳԱՒՈՐԻ ԺԱՍԱՆԱԿԱԾՐՋԱՆԻՆ

ՀԱՅԵՐՈՒ ՆՈՐ ԳԱՂԹԵՐ ԴԷՊԻ ԼԵՀԱՍՏԱՆ

- ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԱՇԽՈՒԺ ԿԱՊԵՐ

- ԼՎՈՎԻ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄ

ՔԱԶԻՍԻՐ Դ.

Լեհաստանի հայկական մեծ գաղթածախը Քազիմիր Դ. թագաւորին գահակալութեան օրով բաւական վերելքային ընթացքով ենթարկուեցաւ: Լվովի հայոց ինքնավարութիւնը սահմանափակուեցաւ, բայց, միւս կողմէ, առեւտուրը աշխուժացաւ եւ հայերու առեւտրական իրաւունքները վերահաստատուեցան: Խրիմէն եւ Մոլտաւիայէն մեծ թիւով հայեր Լեհաստան գաղթեցին եւ գանազան քաղաքներու ու գիւղերու մէջ բնակութիւն հաստատեցին:

Քազիմիր Դ. վախտիլաւ Բ. Եակիմլոյի եւ անոր չորրորդ կնոջ՝ Ջոֆիա շոյգանսքայի գահակնէր. ծնած էր 30 Նոյեմբեր 1427ին. անոր ծնունդին հայրը 75 տարեկան էր, իսկ եղբայրը՝ վախտիլա Գ. իրմէ երեք տարեկան մեծ էր: Երբ 1434ին եղբայրը գահ բարձրացաւ, ան գահաժառանգ հռչակուեցաւ: Սակայն Քազիմիր շատ սահմանափակ ուսում ստացաւ, լատիներէն ընաւ չէր գիտեր եւ վարչական գործերէ ալ չէր հասկնար: Երբ Լիթուանիոյ մեծ դուքս Սիգիսմունտ սպաննուեցաւ 1440ին, ան վիրնիուս զրկուեցաւ իրրեւ կառավարիչ, բայց տեղացի պոյարները պետական հարուած կատարելով՝ զինք մեծ դուքս հռչակեցին եւ ամբողջ իշխանութիւնը անոր յանձնեցին:

Պետական հարուածը Լիթուանիոյ եւ Լեհաստանի միջեւ հակադրութեան պատճառ դարձաւ, բայց երբ վախտիլա Գ. նահատակուեցաւ վառնայի 1444ի ճակատամարտին, լեհեր նոր թագաւոր ունենալու ալ ընտրանք չունէին եւ դիմեցին Քազիմիրի: Առիթը յարմար նկատելով Քազիմիր իր գերզաստանին՝ Եակիմլոյններուն իշխանութիւնը ժառանգական հռչակեց Լիթուանիոյ մէջ: Լիթուանիա Լեհաստանի ենթակայ պիտի չլլար, բայց երկու երկիրները մէկ թագաւոր պիտի ունենային:

Լեհաստան վերադառնալով՝ Քազիմիր 25 Յունիս 1447ին թագաւոր օծուեցաւ Քազիմիր Դ. անունով, իրեն վերապահելով Լեհաստանի կամ Լիթուանիոյ մէջ բնակելու իրաւունքը: Ան աշխատեցաւ ամրապնդել իր տոմին՝ Եակիմլոյններուն հեղինակութիւնը եւ աւելի տոգոմական, քան պետական հեղինակութեամբ հետաքրքրուեցաւ: 1454ին ան ամուսնացաւ Ալյէնթի Բ. Հապսպուրկի դստեր՝ Էլիզաբէթի հետ եւ վեց մանչ եւ եօթը աղջիկ զաւակ ունեցաւ: Էլիզաբէթը «Եակիմլոյններու մայր» կոչուեցին արժանացաւ:



Լվով

ՀԱՅ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐ՝ ՏԱՐԱԵՐ ՈՒՂԻՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Քազիմիր Դ-ի գահակալութեան այս ժամանակաշրջանին, Լվովէն եւ Կամենէցէն դէպի Սուչաւա, Պելրատ եւ թաթարական տիրոջութեան առեւտրական ճանապարհներուն վրայ հայ վաճառականները աշխուժացուցած էին իրենց գործունէութիւնը: Լեհաստանէն անոնք կ'արտահանէին բրդեղէն գործածածքներ, կերպաս, թաւիչ, գլխարկ, գօտի, սուր, դանակ, մանգաղ, գերանդի, սրաքար, ամանեղէն եւ այլն, կը ներածէին արեւելեան համեմատեալ պղպեղ, կոճակաղպեղ, խունկ, կիտրոն, ինչպէս նաեւ՝ մետաքսեայ եւ բամպակէ տեւական գործուածքներ եւ թամբի կաշի, իսկ Տնիբիլըր գետի ափերուն եզներու, կովերու, ոչխարներու ու այծերու առեւտուրով կը զբաղէին:

Այս նոյն ժամանակ հայ առեւտրականները ձեռնարկեցին կալիքիական երկրագործական արտադրութիւններ, յատկապէս՝ ցորեն եւ ալ ընդգեղէններ, ինչպէս նաեւ անասուններ եւ անտառանիւթ արտահանելու դէպի Կեդրոնական Եւրոպայի շուկաները: Անոնք միաժամանակ լատներով, գետերու վրայով այդ պարանքները կը հասցնէին Պալմիր ծովու նա-

ւահանգիստները: Հսկայական հարստութիւն կուտակած հայ առեւտրականներուն շատեր արդէն վաշխառուներ դարձած էին եւ բարձր տոկոսով դրամ կու տային. դրամի կամ մուրհակներու ուժով անոնք հետզհետէ ամբողջ գիւղերու ու ագարակներու տէրեր դարձան: Կարգ մը մեծ առեւտրականներ արքունիքին ալ դրամ փոխ կու տային: Հայ առեւտրական ընտանիքներէն ոմանք ազնուականի կոչում ստացան եւ լեհ ազնուականութեան շարքերը մտան՝ ստանալով շխախտիչ տիրոջութիւններ, օրինակ, Օվակովիչները, որոնք մեծ ազնուականութեան շարքին դասուեցան:

Սակայն անոնց կողքին կար մեծ թիւ կազմող Կալիցիոյ հայ գիւղացիութիւնը. անոնք հողագործներ եւ անասնապահներ էին, ոմանք բարեկեցիկ վիճակի մէջ էին, բայց կարգ մը գիւղերու մէջ անոնք թշուառ պայմաններու տակ կ'ապրէին: Նշենք նաեւ, որ հայ հոգեւորականները օրէնքով լեհական արտօնեալ դասակարգին մաս կը կազմէին:

ԱՌԵՒՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ՝ ՊԱՏԵՐԱԶՄ, ԵՒ ՄՈՒՏԱՒԱԿԱՆ ՃԱՍՏԵՐՈՒՆ ՎՐԱՅ՝ ԱՇԽՈՒԺ ԱՌԵՒՏՈՐ

Ձիւնորայէս հօր, տնտեսապէս բարգաւաճ ու քաղաքականօրէն տիրական ուժ նկատուող Լեհաստանը, Քազիմիր Դ-ի մականին տակ սկսաւ կորսնցնել իր երբեմնի հեղինակութիւնը. կիսագրագէտ թագաւորը Քազիմիրի պալատական կենսքը ձգելով կը նախընտրէր Լիթուանիոյ անտառները որսի երթալ. երբեմն ամբողջ տարի մը ան կը բացակայէր մայրաքաղաքէն:

Արտաքին քաղաքականութեան մէջ Քազիմիր Դ. ոչ մէկ ուղեգիծ մշակեց եւ Մոսկուայի մեծ դքսութեան զօրացող հեղինակութեան դէմ ալ ոչ մէկ քայլի դիմեց. այս պատճառով ալ Լիթուանիոյ ենթակայ ռուս շատ մը իշխաններ Մոսկուայի կողմը անցան:

Քաղաքական այս իրավիճակին մէջ փրուսիացիք 1454ին ապստամբեցան իրենց տիրականներուն՝ Տեւտոնեան միաբանութեան դէմ եւ իրենք գիրենք Քազիմիրի հպատակութեան տակ դրին. ներկայացուած առիթէն օգտուելու եւ միաբանութեան ուժը բանդելու նպատակով Քազիմիր Դ. 6 Մարտ 1454ի որոշումով Լեհաստանի միացած հռչակեց ամբողջ Փրուսիան: Սակայն Տեւտոնեան բանակը Քազիմիրի դէմ պատերազմի ձեռնարկեց եւ յարձակման անցնելով գրաւեց Կասնսքը, Թորունը եւ յառաջացաւ Լեհաստանի խորքերը: 18 Սեպտեմբեր 1454ին լեհական բանակը ծանր պարտութիւն կրեց Քոնիծի մէջ. ընդհատ պատերազմը շարունակուեցաւ ճակատներուն վրայ:


Մինչ արեւմտեան սահմաններուն վրայ պատերազմը կը շարունակուէր, արեւելեան սահմանին վրայ առեւտրական այն ուղին, որ «թաթարական վաճառականութեան ճամբայ» կը կոչուէր, առժամաբար փակուեցաւ. այս պայմաններուն տակ մոլտաւական ճամբուն վրայ առեւտուրը աշխուժացաւ եւ հայ վաճառականներ հոն կեդրոնացուցին իրենց գործունէութիւնը: Այս ժամանակ ամէնէն աւելի բանուկ դարձաւ հայկական հոծ բնակչութեամբ Եազովիցի շուկան: Թէեւ Եազովիցի տեղական իշխանութեան 1461ի որոշումով օտարավաճառները արգիւրուեցան, սակայն Եազովից ապրանքներու փոխանակութեան կարեւոր կեդրոն մնաց:

Քազիմիր Դ. թագաւոր 1462ին հրապարակեց առեւտրականներու գործունէութեան հրամանադիր մը, ուր ան կը հաստատէր 1402ի առեւտրական հրամանագիրը, որուն հիմամբ արտօնութիւն կը տրուէր հայերուն, որպէսզի ծովէն ու օտար երկիրներէն իրենց բերած ապրանքները ծախեն լեհերուն: Հայերուն վերապահուած այդ իրաւունքը 1465ին վերահաստատուեցաւ արքունիքին կողմէ:

Շնորհիւ արքունիքի պաշտպանութեան, շատ մը հայ վաճառականներ շարունակեցին ընդարձակել իրենց գործունէութիւնը, ոմանք ընդարձակ ձեռնարկներ կատարեցին՝ իրենց կարեւոր նպաստը բերելով երկրին զարգացման:

Տեւտոնեան միաբանութեան եւ լեհական բանակին միջեւ պատերազմը տակաւին կը շարունակուէր, մինչեւ որ 19 Հոկտեմբեր 1466ին թորունի մէջ հաշտութեան դաշինք մը կնքուեցաւ:

Լեհաստան տ առաւ Արեւելեան Փոմերա-



Կամենցի գլխաւոր ամրոցը

նիան (որ ստացաւ թագաւորական Փրուսիանունը) եւ Ուարմիայի եպիսկոպոսութիւնը: Տեւտոնեան միաբանութեան մնացեալ տիրոջութիւնը հաստատուեցան Քազիմիր թագաւորին կողմէ, եւ Քոնիկսպէրկ միաբանութեան մեծաւորին նոր կեդրոնատեղին դարձաւ:

ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Լեհահայ գաղթածաններուն մէջ այս ժամանակ հրապարակ իջան գրաբար հայերէնով, լեհերէնով եւ այնուհետեւ նաեւ ղփչաղերէնով ստեղծագործող հեղինակներ. գրական այս շարժումը սկիզբ առաւ Կամենցի մէջ:

Լեհահայ, բայց լեհերէն ստեղծագործող առաջին հեղինակներէն է բանաստեղծ Կասպար Բուտախովիչ (Գասպար Բուդաքեան). ծնած եւ ապրած է Կամենցի մէջ, Ժ. Դ. դարուն: Ան հին ընտանիքի մը շնունդի տղան էր: Անոր բանաստեղծութիւնները կարեւոր աղբիւր են ժամանակաշրջանի պատմութեան ուսումնասիրութեան համար: Բանաստեղծութիւններէն մէկը ան նուիրած է 1444ի վառնայի ճակատամարտին մասնակցած հայկական զօրքին տարած յաղթանակին:

Սկիզբ առաւ նաեւ «Կամենցի. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումանիոյ հաւաստչեայ յաւելումով» խորագրով աշխատութեան ընդօրինակութիւնը, որ կ'ընդգրկէ Կամենցիի պատմութեան ժամանակագրութիւնը՝ 1430էն սկսեալ: Անիկա մեծ մասամբ գրուած է գրաբար եւ աննշան մարջ հայատառ ղփչաղերէնով (ղփչաղները թրքական ժողովուրդ մըն էին, որոնք տարածուած էին Դանուբի ափերէն մինչեւ Կեդրոնական Ասիա. հայեր սերտ յարաբերութիւն ունէին անոնց հետ եւ շատեր ղփչաղերէն կը խօսէին. բայց որովհետեւ ղփչաղները գիր չունէին, ղփչաղերէն լեզուով որեւէ բան գրելու համար կ'օգտագործէին հայերէն տառերը. այսպէս յառաջացաւ հայատառ ղփչաղերէնը): Սերունդէ սերունդ ընդօրինակութիւնը շարունակելով՝ Տարեգիրքը կը հասնի մինչեւ 1652ի իրադարձութիւնները:

ԼՎՈՎԻ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՈՒՄ

Լվովի մէջ հայեր իրենց ներկայացուցած կարեւորութեան քաղաքի բնակչութեան երկծորդ ուժը կը ներկայացնէին լեհերէն ետք: Հայերէն ետք կու գային ուղեւորներն ու հրեաները:

Քազիմիր թագաւորի գահակալութեան նախօրեակին արդէն առանձին հրովարտակով Լվովի ըլլող վաճառականները, նաեւ՝ հայերը, ենթակայ դարձած էին լեհական դատական իշխանութեան: Քազիմիր Դ. 1468ին հայերու ներքին ինքնավարութիւնը սահմանափակող նոր կարգադրութիւններ կատարեց: Իսկ 1476ի հրամանագիրով մը ան աւելի եւս սահմանափակեց հայերու վաշխած երբեմնի իրաւասութիւնները. այս որոշումին հիմամբ հայերու քրէական գործերը՝ գողութիւն, սպանութիւն, բռնաբարութիւն, վիրաւորանք եւ այլն, որոնք մինչ այդ հայկական քաղաքային դատական իշխանութեան սահմաններուն մէջ կը լուծուէին, այսուհետեւ քաղաքային դատաստանի իրաւասութեան սահմաններուն մէջ կ'իյնային:

ՀԱՅԵՐՈՒ ՆՈՐ ԳԱՂԹ ԴԷՊԻ ԼԵՀԱՍՏԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ

Օսմանցի թուրքեր 1475ին գրաւեցին Խրիմի ճենովական գաղթավայրը՝ Կաֆան, ուր հայկական բարգաւաճ եւ մեծ գաղութ մը կար: Թուրքերու հետապնդումներէն հեռանալով՝

հայեր գանգուածաբար անցան Լեհաստան եւ գլխաւորաբար Կալիցիոյ քաղաքներուն՝ Լվովի ու Կամենցիի եւ անոնց շրջակայ բնակավայրերուն մէջ բնակութիւն հաստատեցին. ոմանք ալ երկրին արեւմտեան քաղաքները հասան: Գաղթականները, որոնք ընդհանրապէս առեւտրականներ էին, շարունակեցին իրենց ասպարէզը եւ հանգիստ պայմաններ ու երաշխիքներ ստանալով՝ ընդարձակեցին իրենց գործունէութիւնը:

Միաժամանակ Մոլտաւիայէն եւս հայեր Լեհաստան անցան: Արդէն Մոլտաւիոյ եւ Լեհաստանի եւ յարաբերաբար Լեհաստանի եւ Արեւելքի միջեւ, Մոլտաւիոյ վրայով կային առեւտրական յարաբերութիւններ: Մոլտաւիոյ մէջ բնակութիւն հաստատած էին նաեւ լվովցի հայ վաճառականներ:

Մոլտաւիոյ հոսպոտար Շթեֆան Գ. Մեծ իշխանը (1457 - 1504) մեծապէս քաջալերեց Լվովի եւ Մոլտաւիոյ միջեւ առեւտուրը եւ Լվովի հայ վաճառականներուն հետ անձնական կապեր ու գործառնութիւններ հաստատեց. ան յատկապէս ձգնեցին կը հայթայթէր անոնց, որոնք մեծաքանակ կ'առնէին եւ Լվովի շուկային մէջ կը ծախէին:

Կաֆայէն Լվով փոխադրուած հայ վաճառականները, որոնց առեւտրական ճամբաները նախապէս Կամենցիէն եւ Փոտոլիայէն կ'անցնէին, քաղաքական նոր պայմաններու ընդունով, ստիպուած էին փոխելու իրենց ճամբաները: Հետեւաբար անոնք սկսան ծովու ճամբով դէպի Աքքերման եւ ապա ցամաքի ճամբով դէպի Սուչաւա եւ Հալիչի վրայով դէպի հեռաւոր շրջաններ, ինչպէս նաեւ Չեռնովիցի, Մնիատինի, Քոլոմիայի եւ Թրեպովլայի վրայով առեւտուր կատարել: Թէեւ այս ճամբաներն ալ անապահով էին, բայց բոլոր երկրամասերուն լաւ ծանօթ ըլլալով՝ հայ վաճառականները միշտ ալ կը յաղնէին ապահով ճամբորդութիւններ կատարել:

Սեւ ծովու երկու կարեւոր նաւահանգիստներ՝ Քիլիա եւ Աքքերման, որոնք Լիթուանիոյ ենթակայ էին, 1484ին գրաւուեցան թուրքերուն կողմէ:

Եազովիցի շուկան, որ ամէնէն աւելի բանուկ դարձած էր, աւելի աշխուժացաւ, մասնաւորապէս որ 1469էն սկսեալ հոն դրամներու փոխանակութեան ազատութիւն հաստատուած էր: Հայ առեւտրականները օգտուեցան առիթէն եւ իրենց գործունէութիւնը աւելի եւս ծաւալեցին հոն:

Լեհական իշխանութիւնները, հայ վաճառականներուն ծաւալող գործունէութիւնը նկատի ունենալով՝ յաւելեալ իրաւասութիւններ տուին անոնց: 1486ին հայեր իրաւունք ստացան լեհական շուկաներուն մէջ գինի ծախելու:

Այս ժամանակաշրջանին մեծ հեղինակութիւն ունեցող հայերէն յիշենք Յակոբ Հայր. 1490ի տուեաններով, ան Քրիստովիչ գիւղին ընտրովի ղեկավարն էր:

ԵԱԿԵԼԼՈՆՆԵՐՈՒ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ



Քազիմիր Դ. թագաւոր աշխատեցաւ իր գահակներուն «քաղաքական ամուսնութիւններ» ապահովել եւ այդ միջոցով ալ յաղնեցաւ տարածել Եակիմլոյններու տան հեղինակութիւնը: Անդրանիկ գաւազը՝ վախտիլա 1471ին Պոհեմիոյ թագաւոր հռչակուեցաւ եւ 1490ին Հունգարիոյ թագաւոր դարձաւ: Երեք տղաքը Լիթուանիոյ եւ Լեհաստանի գահերուն ժառանգորդ հռչակուեցան: Մէկ գաւազը արքայիսկոպոս եղաւ եւ այնուհետեւ՝ կարտիսայ: Աղջիկներէն հինգը ամուսնացան գերմանացի իշխաններու հետ եւ Քազիմիր անունը տարածեցաւ գերմանական ընտանիքներուն մէջ:

Պոհեմիա, Մորաւիա եւ Սիլեզիա 1471ին Եանոշ Հունիատի գաւակին՝ Մաթիաս Ա-ի անցած էին, բայց անոր մահէն ետք Մորաւիա, Սիլեզիա եւ Հունգարիա ճանչցան լեհական արքունիքին գերիշխանութիւնը: Քազիմիր Դ. մահացաւ 7 Յունիս 1492ին:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը շարժապատկերներն էր գումարած հերթական ժողովին վաճառքը ներքին էր 16րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, հրապարակեց երկար ցանկը այն մարզիկներուն, որոնք անցեալ շաբաթավերջին իրենց երրորդ դեղին քարտը ստանալով կը կախակայուն շարժապատկերի մրցումներէն:

Կախակայուն 12 մարզիկներէն բացի, երկու այլ մարզիկներ եւ կը կախակայուն, սակայն երկուբեկան մրցումով, որովհետեւ կարծիք քարտ ստացած էին: Անոնք են. Թոնի Ռահի (Ռասիդ) եւ Ալի Հասուն (Անար):

Ստորեւ ցանկը 12 մարզիկներուն, որոնք մէկական մրցումով կը կախակայուն. Վարդան Ղազարեան (Սոթէ), Թորէ Ապտալա (Ահլի Սայտա), Տորի Զախուր, Լուիս Թրանթիթ (Ռասիդ), Ապպաս Աթուէ (Նըթմէ), Ալի Աուատա (Ախա Ահլի Ալէյ), Նալիլ Ուաթֆա (Պըթ), Ահմէտ Սըֆը, Հըսէյն Ալիք (Շապապ Սահլ), Եուսէֆ Մոհամէտ, Ուալիտ Միրի եւ Ալի Ուասէֆ (Սաֆա):

Ֆետերասիոնը երեք միլիոն լիբանանեան ոսկի տուգանքի ենթարկեց Պըթը, որուն համակիրները հայտնաբերուած էին Սաֆայի համակիրներուն (Երկուշաբթի օր):

Շաբաթավերջի 17րդ հանգրուանի մրցումները պիտի կայանան ֆետերասիոնին կողմէ նախագէս հրապարակուած յայտագրի շրջանում: Միակ փոփոխութիւնը, որ տեղի ունեցած է, այդ ալ թատամոն Սուր - Սալամ մրցումն է, որ Սուրի դաշտին փոխադրուած է Պէյրութի Բաղաբապետարանի դաշտ:

Ստորեւ 17րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ՇԱԲԱԹ. 16 ՄԱՐՏ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ախա Ալէյ - Ռասիդ	3:00ից	Մ. Աւան
Հ.Մ.Ը.Մ. - Ահլի Սայտա	3:00ից	Պ. Համուտ
Շ. Սահէլ - Պըթ	4:45ից	Պէյրութ

ԿԻՐԱԿԻ. 17 ՄԱՐՏ	ժԱՄ	ԴԱՇՏ
Սաֆա - Ահու	3:00ից	Սաֆա
Թատամոն Սուր - Սալամ	3:00ից	Պէյրութ
Հ.Մ.Մ. - Սոթէ	3:00ից	Պ. Համուտ
Անար - Նըթմէ	4:45ից	Մ. Աւան

ԱԿԱՍԻ ԺԱՀԵՑԱԻ ԻՐ 50ՐԴ ՏԻՏՂՈՍԸ



Անտրէ Ակասի

Անցեալ շաբաթավերջին, վերջ գտան Արիզոնայի եւ Ֆլորիտայի մէջ տեղի ունեցած թենիսի տղոց միջազգային մրցաշարքերը՝ յաջողաբար Անտրէ Ակասիի եւ Տաւիտ Սանկուինթիի արձանագրած յաղթանակներով:

Մրցումները մէջ (Արիզոնա) տեղի ունեցող տղոց աւարտական մրցումին, թիւ 1 դասուած (մրցաշարքին) Անտրէ Ակասի (Մ. Ն.) 6-2 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնել էտք սպանացի իր մրցակիցը իտալացի Տաւիտ Սանկուինթիին 6-4, 4-6 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնել էտք էնտի Ռոտիքը (Մ. Ն.) տիրացաւ տիտղոսին:

29 տարեկան իտալացին այսպիսով դարձաւ առաջին մարզիկը, որ այս տարի կը տիրանայ միջազգային իր երկրորդ կարեւոր մրցաշարքին:

Ստորեւ տղոց առաջին տասին դասակարգումը (փակագրի մէջ նշուած է անոնց անցեալ շաբաթուան զբաղմունքը).

1.- Լէյթըն Զեուիթ (Աւստրալիա) (առաջին)	4245
2.- Կուսաբալո Քուէրթէ (Պրագի) (2րդ)	3385
3.- Եւգենի Քաֆելիքով (Ռուսիա) (3րդ)	2775
4.- Խուան Քարլոս Ֆերերո (Սպանիա) (4րդ)	2760
5.- Անտրէ Ակասի (Մ. Ն.) (5րդ)	2690
6.- Թոմի Հասս (Գերմանիա) (6րդ)	2515
7.- Սեպաթիան Կրոման (Ֆրանսա) (7րդ)	2330
8.- Մարաթ Սաֆին (Ռուսիա) (9րդ)	2285
9.- Թոմաս Եռնաքս (Շուէտ) (10րդ)	2275
10.- Փէթ Ռաֆթըր (Աւստրալիա) (8րդ)	2270

«ՉԵՄՓԻԸՆՉ ԼԻԿ»

ԱՐՍԵՆԱԼ ՏԵՂԻ ՏՈՒՄ ՏԵՓՈՐԹԻՕ ԲՈՐՈՒՆԱՅԻ ԱՈՋԵՒ՝ 0 - 2

«Չեմփիընգ Լիկ»ի Բ. հանգրուանի դարձի նախավերջին հանգրուանի մրցումներուն, երէկ տեղի ունեցան չորս ճակատումներ՝ Գ. եւ Դ. խմբակներէն ներս:

«Հայալըի»ի մէջ տեղի ունեցած մրցումին (Դ. խմբակ), Արսենալ յուսալար ըրաւ իր համակիրները, երբ 2 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Տեփորթի Բորոնայէն: Սպանական կազմին կողմը նշանակեցին Խուան Բարրոս Վալերո (30րդ) եւ Նուրէտտին Նայպէ (40րդ):

Բ. կիսխաղին, Արսենալի մարզիկ Թիերի Հանրի փենալթի յաջողեցաւ զսպել Լա Բորուսայի թերթապահ Խոսէ Մոլինա: Այսպիսով, մրցաշարքին ընթացքին իր դաշտին վրայ իր կատարած յաջողական եօթ մրցումներուն պարտութիւն չկրած Արսենալ ի վերջով պարտութիւն մը կրեց: Բառորդ աւարտականի մրցումներուն տոմս մը ապահովելու համար, Արսենալ այժմ պիտի սպասէ իր կատարելիք վերջին մրցումին՝ Եուսէֆ Պէլլի: Նշեք, թէ իր արձանագրած այս յաղթանակէն ետք սպանական կազմը

ապահովեց քառորդ աւարտականին իր տոմսը: Նոյն խմբակէն ներս տեղի ունեցող երկրորդ կարեւորագոյն մրցումը՝ Պայէր Լեւերքուզընի եւ Եուսէֆ Պէլլի միջև, վերջ գտաւ ի նպաստ գերմանական կազմին՝ 3 - 1 արդիւնքով: Երկր Պայթ (24րդ) փենալթիով, Թոմաս Պրոտարի (71րդ) եւ Մարքո Պայիլ (90րդ) նշանակեցին Պայէրի կողմը, իսկ Իկոր Թուտոր

Եուսէֆի կողմը (61րդ): Արդէն իսկ իր տոմսը ապահոված Ռէյալ Մատրիտ 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Սփարթա Փրական, շնորհիւ՝ Սանթիա-կո Սոլարիի (60րդ), Կուլիթի (64րդ) եւ Սալիո-յի (71րդ) կողմէ նշանակած կողմերուն:

Փորթո արձանագրեց իր առաջին յաղթանակը, 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնելով Փանթինայը:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Գ. ՆՄՐԱԿ	Փորթո (Փորթուգալ) - Փանթինայը (Յունաստան) 2 - 1
Ռէալ Մատրիտ (Սպանիա) - Սփարթա Փրակա (Զեխիա) 3 - 0	
Դ. ՆՄՐԱԿ	Արսենալ (Անգլիա) - Տեփորթի Բորոնա (Սպանիա) 0 - 2
Պայէր Լեւերքուզըն (Գերմանիա) - Եուսէֆ Պէլլի (Իտալիա) 3 - 1	

ԱՅՍՕՐ	ժԱՄ	ԴԱՇՏ
Ա. ՆՄՐԱԿ	Մանչեսթըր Եուսէֆը (Անգլիա) - Պայէրն Միլիթի (Գերմանիա)	
Նանթ (Ֆրանսա) - Պուլիսթա (Փորթուգալ)		

Բ. ՆՄՐԱԿ	Պարսելոնա (Սպանիա) - Լիվըրպուլ (Անգլիա)
Ա. Էս. Ռոմա (Իտալիա) - Կալաթասարայ (Թուրքիա)	

ՍԵԼԹԻՔՍ ԱՐԶԱՆԱԳՐԵՑ ՅԱՉՈՐԴԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Էն. Պի. Էյ. Ի երէկուան մրցումներուն, Պոսթըն Սելթիքս արձանագրեց յաջողական իր հինգերորդ յաղթանակը. ան յաղթական վերադարձաւ Ուաշինգթոնը, ուր 104-99 արդիւնքով պարտութեան մատնեց Ուիզարտը: Սելթիքսի մարզիկ Փոլ Փիրս նշանակեց 37 կէտ, իսկ Ուիզարտի մարզիկ Ռիչըրտ Զէմիլընը՝ 31 կէտ: Հէմիլընի խմբակից Քըրթնի Ալեքսանտր նշանակեց 24 կէտ, սակայն անոր կազմը այսպիսով իր կատարած 16 մրցումներուն ընթացքին կրեց իր 13րդ պարտութիւնը:

Շիքագո Պուլզ - Սաքրամենթո Քրիստֆերսոնի միջև նախագահին կը կարծուէր թէ հիւր կազմը, որ Էն. Պի. Էյ. Ի ցարդ զօրաորակոյն կազմէրէն մէկը ըլլալով շատ

դիւրութեամբ յաղթական պիտի վերադառնայ Շիքագոյն, նկատի ունենալով, որ այս վերջինը ամէնէն տկար խումբն է, որ կը գրաւէ Կեդրոնական գոտիի (Արեւելեան շրջան) վերջին դիրքը: Քրիստֆերսոնի նախադրական գոտիի (Արեւմտեան շրջան) պարագլուխի դիրքը:

Հակառակ Պուլզի մարզիկ Ճէյլըն Ռոզի կողմէ նշանակուած 35 կէտին եւ 13 Էսիսթին, անոր կազմը կրեց յաջողական իր վեցերորդ պարտութիւնը: Քրիստֆերսոնի ներքին փետա Սթոմպըրդի նշանակեց 29 կէտ եւ 9 ռիպաունտ, իսկ անոր խմբակից Քրիս Ուեպլընը 26 կէտ եւ 11 ռիպաունտ: Այսպիսով, Քրիստֆերսոնի նախադրական իր երրորդ յաղթանակը:

Սան Անթոնիո Սփըրզ յաղթական վերադարձաւ Տենիսի, ուր 93-78 արդիւնքով պարտութեան մատնեց Նալէթը: Սփըրզ այսպիսով արձանագրեց յաջողական իր վեցերորդ յաղթանակը արձանագրելով իր հինգերորդ յաղթանակը: Սալախի յաղթանակը կերտեցին Մայքըլ Ֆինլէյ, Սթիւ Նէշ եւ Տըրք Նովիթցի, որոնք միասնաբար նշանակեցին 68 կէտ: Սուրբ Փէյթըն նշանակեց 22 կէտ եւ 7 Էսիսթ:

Տալասի մէջ, Մալթրիքս 119-108 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Միլթը Սուրփըրսոնիքսը, այսպիսով վեցերորդ յաղթանակը յաղթանակը կերտեցին Մայքըլ Ֆինլէյ, Սթիւ Նէշ եւ Տըրք Նովիթցի, որոնք միասնաբար նշանակեցին 68 կէտ: Սուրբ Փէյթըն նշանակեց 22 կէտ եւ 7 Էսիսթ:

ONE SECOND IS ENOUGH... Արագը կը Պոսաշի Երկարժամանակի Մը Մէք...

...BUT WE USE THEM ALL. ...ԻՍԿ ՄԵՔ ՆԵՐԿԱՅ ԵՄ ԱՄԵՆ ԵՐԿԱՅԵՐԿԱՆ.

ԱՖՃԻԼ AFHIL

Սֆտի-ի Ելք, Բ. Յարկ, 7եմ. Ել Յարկ. (01) 262231-242556-242557
Imm. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ՊԱՍԵԹՊՈՒԼ

ԱՅՍՕՐ՝ 3. Մ. Ը. Մ. - ԲԱՅՐԱՊԱ ԱԲԱՐՏԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱԿԱՏՈՒՄ

Լիբանանի պասթեթպոլի Ա. դասակարգի տոմսին համար, այսօր տեղի կ'ունենայ Հ. Մ. Ը. Մ. - Քահրապա երկրորդ ճակատունը, Հ. Մ. Ը. Մ.ի «Թունուկան» մարպարատին վրայ, ժամը 20:00ին:

Շանթ Ե, որ երեք մրցումներէն երկու յաղթանակ արձանագրող խումբը կ'ապահովէ Ա. դասակարգի տոմսը: Հետեւաբար, իր առաջին մրցումին պարտութիւն կրած Հ. Մ. Ը. Մ.ի կազմը (66-62) իր ամէն կարելին պէտք է ընէ այսօր՝ յաղթանակ մը արձանագրելու, Քահրապալի պարտադրելով երրորդ եւ ճակատագրական մրցումը, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 15 Մարտին, Քահրապալի դաշտին վրայ, ժամը 20:00ին: Այլապէս, այսօր իսկ Քահրապա կ'ապահովէ տոմսը եւ Հ. Մ. Ը. Մ.ի յոյսերը ի դերել կ'ելլեն:

Հ. Մ. Ը. Մ. - ԼԵՎԱՍ

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Անցեալ շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի ունեցան Հ. Մ. Ը. Մ.ի ԼԵՎԱՍԻ յանձնախումբին կողմէ կազմակերպուած մինի ֆուտբոլի մրցումները, որոնք տուին հետեւեալ արդիւնքները:

ՇԱԲԱԹ. 9 ՄԱՐՏ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ճեմարան - Լ. եւ Ս. Յակոբեան (փոքր)		1-1
Թորոսեան - Քաղաքի Հայ Աւետ. քոլէճ (մեծ)		0-2
Ս. Խանմիրեան - Շամլեան-Թաթիկեան (փոքր)		1-3
Ս. Քառասնից Մանկանց - Լ. եւ Ս. Յակոբեան (փոքր)		7-4
Արգարեան - Գ. Չաթալպաշեան (փոքր)		5-3

ԿԻՐԱԿԻ. 10 ՄԱՐՏ (Քառորդ աւարտական)

Դպրեվանք - Եղիշէ Մանուկեան (փոքր)	4-0
Յովակիմեան - Ճեմարան (մեծ)	5-0
Արգարեան - Շամլեան-Թաթիկեան (փոքր)	1-4
Կ. Բ. Վ. - Ս. Հոխիսիմեանց (մեծ)	4-3

● ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻՆ, մինի ֆուտբոլի մրցումներուն կողքին (քառորդ աւարտական), կը սկսին նաեւ պասթեթպոլի մրցումները:

Ստորեւ՝ յայտագիրը.

ՇԱԲԱԹ. 16 ՄԱՐՏ	ժԱՄ	ԴԱՇՏ
Թորոսեան - Գ. Չաթալպաշեան (միջակ աղջիկներ)		1:30
Թորոսեան - Գ. Չաթալպաշեան (միջակ տղաք)		2:15
Կ. Բ. Վ. - Շամլեան - Թաթիկեան (մեծ աղջիկներ)		3:00
Լ. եւ Ս. Յակոբեան - Կ. Բ. Վ. (մեծ տղաք)		4:00

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈՒԼ ՄԵՐԱՊԵԱՆ - Լ. եւ Ս. Յակոբեան (փոքր) 5:00

Մերապեան - Եղիշէ Մանուկեան (մեծ) 5:30

Ս. Քառասնից Մանկանց - Ս. Ազնէս (փոքր) 6:10

Լ. եւ Ս. Յակոբեան - Քաղաքի Հայ Աւետ. քոլէճ (մեծ) 6:40

ԿԻՐԱԿԻ. 17 ՄԱՐՏ

ՊԱՍԵԹՊՈՒԼ

Քաղաքի Հայ Աւետ. քոլէճ - Յովակիմեան (միջակ տղաք) 2:00

Ս. Ազնէս - Դարուհի-Յովակիմեան (միջակ աղջիկներ) 2:45

Ս. Ռաշ (Հարպոյեան) - Ս. Ազնէս (միջակ տղաք) 3:30

Ճեմարան - Եղիշէ Մանուկեան (մեծ աղջիկներ) 4:30

Ճեմարան - Եղիշէ Մանուկեան (մեծ տղաք) 5:30

ՏԱՆՈՒ Ե

● Անթիլիսի շրջան, 2163 քառ. մետր: Հեռ. 03 - 204309:

ՏԱՆՈՒ Է

● Նոր յարկաբաժնի մը, 140 քառ. մետր, Պառլոնի, Սար Եուսէֆ փողոց, գեղատեսիլ դիրք: Հեռ. 01-899718:

ԿՈՒՉՈՒԻ

● Չապիկի վաճառատուն մը կարիք ունի վաճառող երիտասարդ կամ երիտասարդուհի մը: Հեռ. 01 / 267242:

STUDIO Lantern

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video

Գկարահանումներ

Հեռ. 01-266866 Էլ 03-695399

ՃԱՆՈՒ ԳՐԱՍԵՆԱԿՆԵՐ

60ԵՆ 90 քառ. մետր առարտութեամբ արդիական կառուց, Նախ Էլ Սոր, Օրոտարտ Ռուսիի սկիզբը, «Սանթրո» Ե. ՏԵՏԵԱՆ: Դիմել՝ հեռ. 03 - 204309 քիլիմ:

ՌՈՒՍԻԱՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՌԱՇԽՆԿԹԵՆԻՄԷԶ

ՌԱՇԽՆԿԹԵՆ, 12 (ՌՈՅ-ԹԸՐԶ)։- Ռուսիայի պաշտպանության նախարար Սերգեյ Իվանով Երեքշաբթի օր Ուաշինգտոնի մէջ երկօրեայ բանակցութիւններու սկսած է ամերիկացի դեկավարներու հետ՝ երկկողմանի յարաբերութիւնները շերտացնելու եւ կորիզային գլուխներու քանդումի գծով Փենթագոնի հետ ծայր տուած բանավեճի մը առնչութեամբ:



Ռամսֆելտ Փենթագոնի մուտքից կը դիմարտէ Իվանովը:

Երկու կողմերուն օրակարգի նիւթերէն էր նաեւ ամերիկեան կորիզային նոր քաղաքականութեան վերատեսութիւնը, որ ըստ կարգ մը տեղեկագիրներու՝ Ռուսիան եւ առնուազն 6 այլ երկիրներ ամերիկեան թիրախներու ցանկի մը վրայ կը դնէ:

Ինչ կը վերաբերի կորիզային գլուխներու կրճատման հարցին, բանավեճ մը ծայր տուած է ամերիկեան այն առաջարկներուն գծով, թէ գլուխներուն մէկ մասը պահ պէտք է դրուի, փոխանակ քանդուելու:

Ամերիկեան կորիզային նոր քաղաքականութեան վերատեսութեան գծով, հաւանաբար Իվանով կրկնէ այն դժգոհութիւնները, զորս դրսեւորած էր Մոսկուա, յատկապէս այն տեղեկագիրին ի տես, որ հրապարակուած էր «Լոս Անձելըս Թայմս» օրաթերթին մէջ, եւ որ հաւասարապէս քննադատուած էր նաեւ Չինաստանի կողմէ, որովհետեւ անոր անունը եւս տեղ գտած էր ամերիկեան այդ նոր ցանկին վրայ, Լիպիոյ, Իրաքի, Հիւսիսային Բորնէյի, Ռուսիայի եւ Իրանի կողքին:

ՌՈՊԻՆՍԸՆ Կ'ԱՄՔԱՍՏԱՆԷ ՌՈՒՍԻԱՆ՝ ՉԵՉԵՆԻՈՅ ԸԱՐՑԻՆ ԳԾՈՎ

ՄԱԿի մարդկային իրաւանց հարցերու պատասխանատու Մէյրի Ռոպինսըն երէկ Ռուսիան ամբաստանած է ըսելով, որ անհկարգ ընթացք չէ տուած «հաւաստի» քննութիւններու ձեռնարկելու միջազգային պահանջներուն, ինչ կը վերաբերի անոր ուժերուն կողմէ Չէչենիոյ մէջ սպանութիւններու, չարչարանքներու եւ աւազակութեան ամբաստանութեանց:



Մէյրի Ռոպինսըն

Անոր տեղեկագիրը, որ ՄԱԿի մարդկային իրաւանց յառաջիկայ յանձնաժողովին կողմէ պիտի քննարկուի, կրնայ միջազգային քննութեանց գծով նոր պահանջներու դուռ բանալ, ինչ կը վերաբերի անջատողական ջրջանին մէջ վայրագութեանց:

Ռոպինսըն կոչ ուղղած է նաեւ, որ չէչէն ըմբոստները իշխանութիւններուն եւ քաղաքայիններուն յարձակումներուն վերջ տան:

Միւս կողմէ, գերմանական օրաթերթեր երէկ հաղորդած են, թէ ռուսական բանակը կը շարունակէ Չէչենիոյ մէջ ապօրինի մահապատիժի գործադրութիւններու եւ տանջանքներու ձեռնարկել, հակառակ այն հաւաստիքներէ:

րուն, թէ նահանգին նակուի: մէջ կեանքը բնականոն ձեւով կը շարունակուի: (ՌՈՅԹԸՐԶ)

ԵՐԲ ԳՈՂԸ ՓԱԽՈՒՍԻ ԾԱՍՔԱՆ ԿԸ ԿՈՐՄՆՅՆԷ...

Հարաւային ափրիկեցի գող մը մահացու սխալ մը գործեց, երբ փախուստի պահուն «սխալմամբ» մտաւ վազրերու վանդակ, յայտնեց ռուսիկանութիւնը Երկուշաբթի օր: Ռուսիկանութեան բանբերը ըսաւ, որ 28 տարեկան գողը եւ անոր մեղսակիցը ձուսուած էին մտաւորական կենդանութեան փոխարէն: Գախուստի պահուն գողը մագլցած է պատ մը, ուրկէ իջնելէ ետք, նկատած է, որ կոյտ մը վազրերու դիմաց կը գտնուի: Բանբերը ըսաւ, որ վազրերը սկիզբը բաւական «պարզ» են հետը, ու ապա՝ պայն աչ ու ձախ նետած: Դիակը կարելի էր զած է դուրս հանել՝ թմրեցնելէ ետք երկու վազրերը: (ՌՈՅԹԸՐԶ)

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5098

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՐԻՉՈՒՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՑ
1. Հակիթի ղեղնուց - Ոսկի եւ արծաթ փորձելու քար:	1. Աքաղաղի կատար - Հասկաքաղի խուրձ:
2. Նշանաբան - Սուրիական լրատու գործակալութիւն:	2. Մանրութեան միաւոր - Ափրիկեան երկիր:
3. Խալիֆայական կուսակալ - Դաս, խումբ:	3. Իտալաբնակ ցեղ - Շաղկապ - Չայնական տառեր:
4. Հանգոյն - Անմարդարեան:	4. Աչքի պտուղ - Սողուն ճարտարագիտական (հակ) - Նոյն գիրքը:
5. Կլոր բուրգ - Կիտած:	5. Երկաթային գործընկեր (հակ) - Նոյն գիրքը:
6. Երեսին տրուած ափով հարուած - Տառի մը անունը:	6. Սպասէ՛ - Ցուցական դերանուն:
7. Յոյներու կողմէ Մեքսիկոյ Մաշտոցի տրուած մակդիր:	7. Շրջուած՝ դամբան - Ճամբայ:
8. Յախճապակի - Լեռնէ գլորող ձիւնկոյտ:	8. Ցուցական անկան - Հայածից մը - Ի հարկէ:
9. Կրկնուած բաղաձայններ - Ապառաժուտ:	9. Խոհանոցի սպասնէրէն - Քաղցուէ խճուղ:
10. Լիպիոյ վերջին թագաւորը - Յարդանի կողքին:	10. Իգական անուն - Ցուրտէ պնդացած ջուր:
11. Իւրացուց - Աւետիք Իսահակեանի հայրը:	11. Յոյժ - Յակոբ Պարոնեանի ծննդավայրը:

ԹԻԻ 5097

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ս	Լ	Ի	Կ	Շ	Ա	Ն	Ե	Ս	Ս
2	Գ	Ա	Ր	Շ	Ո	Ր	Ո	Ր	Ա	Լ
3	Ե	Ր	Ա	Կ	Ա	Ն	Ս	Ե	Ի	Ե
4	Գ	Ա	Կ	Ի	Շ	Գ	Ա	Գ	Ի	Շ
5	Ա	Կ	Ա	Ր	Ն	Ո	Ր	Ո	Ր	Ա
6	Ն	Ա	Ն	Թ	Ա	Ս	Ե	Գ	Կ	Կ
7	Ի	Լ	Կ	Կ	Ե	Ն	Ս	Ս	Ս	Ս
8	Գ	Ի	Ո	Ն	Ս	Ի	Ի	Ի	Ի	Ի
9	Բ	Ա	Ր	Ե	Ի	Ի	Ր	Ա	Ն	Ի
10	Ա	Գ	Ա	Ս	Ա	Ն	Ր	Ր	Ա	Ն
11	Լ	Ս	Ի	Ա	Ն	Ս	Ս	Ս	Ս	Ս

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուքի սակարանին մէջ օտար դրամանցիներու փակման սակագինները հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3990,00 - 4010,00	լ.ն.
Քուեյթեան տինար	4906,42 - 4910,42	լ.ն.
Յորդանանեան տինար	4896,42 - 4950,24	լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիաւ	408,43 - 412,42	լ.ն.
Սէուտական ռիալ	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քաթարեան ռիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կիւն	323,72 - 327,72	լ.ն.
Անգլիական սթերլին	2141,70 - 2145,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	894,35 - 898,52	լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաուստ	2294,25 - 2298,35	լ.ն.
Ճափոնական հապար եէն	11069 - 11073	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	951,40 - 955,85	լ.ն.
Աւստրալիական տոլար	783,85 - 787,70	լ.ն.
Եւրո	1319,95 - 1321,16	լ.ն.

ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	91,000 - 101,000	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	80,000 - 90,000	լ.ն.
Մեքսիքական փէսոս	474,000 - 498,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ		
ձոյլ ոսկի	12,300,000 - 12,800,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	287,68 - 291,72	Տ
Մէկ օսն արծաթ	4,42 - 4,46	Տ

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում

Ա. կարգի	4 3/8	4 4/8
Բ. կարգի	-----	4 5/8

ԼԻԲԱՆԱՆԵՒԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ...

Ծարուցակուած Ա. Էջէն

Թիւրքիա հետ, որ ըստ է, թէ Տիւրքիայի պիւրիտանները լսած են կրակոցները եւ վստահ են, որ անոնք կատարուած են իսրայէլեան հողի վրայ:

Տիւրքիայի բանբեր Թիւրքիա Կեօքսէլ լիբանանեան լրատու միջոցներու հարցապնդումներուն պատասխանեց, որ դէպքին վայրը Տիւրքիայի գործունէութեան շրջանէն դուրս կ'իջնայ:

«Տիւրքիա ոչ մէկ տեղեկութիւն ունի լիբանանէն պիւրիտաններու Իսրայէլ թափանցումին մասին. գիտենք միայն, որ իսրայէլեան ուժերը քանակապէս սկսած պահուն փակեցին արդէն Նաբուրաւի անցքին թէ՛ երթի, թէ՛ դարձի ճամբաները», ըսաւ Կեօքսէլ:

Իսրայէլեան ձայնասփիւրը երէկ կէսօրէ ետք յայտարարեց, որ լիբանանեան սահմաններէն անցնող իսրայէլեան զորքերը չեն ընդհատուած Իսրայէլեան սահմանագիծին մօտ իսրայէլեան դիրքի մը վրայ, առանց կոն կամ վիրաւոր պատճառելու, ըսաւ նոյն աղբիւրը:

Լիբանանեան ապահովութեան աղբիւրները հերքեցին այս տեղեկութիւնները եւ Հրկայալա յայտարարեց. որ ոչ մէկ առընչութիւն ունի այս դէպքերուն հետ:

Իսրայէլեան իրենց անուանուած Նաբուրաւի անցքին եւ Սատանէ լեռն շրջանները, Մապարի Երապալի եւ Ուայսաթ Ալամի իր դիրքերէն:

Կէսօրէ քիչ ետք, իսրայէլեան իրենց անուանուած վերստին ընդհատեց Սատանէ լեռը:

Իսրայէլեան բանակը յայտարարութեամբ մը հաւաստեց, որ իր ուժերը չեն ընդհատուած Քֆարշուպալի շրջանը:

Իսրայէլեան բանակը կը հակադէր լրատու միջոցներու այն հաղորդումներուն, թէ վերոյիշեալ ընդհանրութիւններուն ընթացքին ռուսները ինկած են լիբանանեան սահմաններէն ներս, Քֆարշուպալի անտառներուն մէջ:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ...

Ծարուցակուած 4րդ Էջէն

բնակութեան շէնքեր քանդելով եւ ամէն տեսակ ապօրէն արարքներու ու բռնութիւններու դիմելով: Այս բոլորին դիմաց ո՛ր են ՄԱԿը, Միացեալ Նահանգները եւ Եւրոպան: Պէտք է ամէն միջոցներու դիմել առաջին հերթին կասեցնելու ամէն տեսակ բռնութիւն եւ կողմերը հրաւիրելու քաղաքական խօսակցութեանց:

Արդարեւ, իրաւունքի ու արդարութեան վրայ հիմնուած քաղաքական բանակցութիւններն են մնալուն ու ամբողջական խաղաղութեան տանող միակ ճամբան: Պահեստինցի զրկուած ժողովուրդը պէտք է տիրանայ իր մարդկային ու ազգային իրաւունքներուն՝ անկախ պաղեստինեան պետութեան ճամբով իր ինքնորոշման իրաւունքը հաստատելով: Սփիւռքի մէջ գտնուող բոլոր զաղթական պաղեստինցիները պէտք է վերադառնան իրենց հայրենիքը եւ պէտք է արարական գրաւեալ հողերը վերադարձուին արարներուն: Ահա այն ժամանակ միայն փոխադարձ վստահութիւն, ամբողջական խաղաղութիւն ու ապահովութիւն կը հաստատուի շրջանին մէջ: Արդարութեան վրայ հիմնուած խաղաղութիւնն է բոլոր ազգերու կեանքի ճամբան եւ խաղաղ աշխարհ մը կերտելու միակ երաշխիքը:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը բազմաթիւ առիթներով, ինչպէս նաեւ վերջին շրջանին, յատուկ կոչ ուղղած են բռնութեան դադարեցման եւ քաղաքական բանակցութեանց վերսկսման՝ յարգելով պաղեստինցի ժողովուրդին արդար իրաւունքը: Հետեւաբար կոչ կ'ուղղեմ շրջանի ու միջազգային բոլոր ուժերուն ու պատասխանատուներուն, այս յանձնարարութեամբ գործելու, որպէսզի Միջին Արեւելքի մէջ դադարի ամէն տեսակ բռնութիւն, վերջնապէս թշնամութիւնը եւ հաստատուի արդարութիւնը ու մարդոց միջեւ աճի սէր, վստահութիւն եւ խաղաղութիւն:

NARRA TRADING

Ռոքոշուի քիւ 47/1

& GENERAL SERVICES CO. S.A.R.L.

ՆԱՐԱ ԹԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.

(Սեփականատը՝ Վահէ Մանուչակեան)

ՎԻԵՏՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԿԻՆԵՐՈՒ ԱՊԱՇՏՎՈՒՄ

- Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
- Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
- Մասնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:

Պաշտոնէ, City Hospital հիւանդանոցի փողոց, «Ելի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանցիներու փոխանակման սակը հետեւեալն էր երէկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	0.8754
Ֆրանսական ֆրանք	7.4889
Քանադական տոլար	1.5851
Գերմանական մարք	2.2332
Հոլանդական ֆլորին	2.5159
Չուիցերիական ֆրանք	1.6777
Պելիքական ֆրանք	46.061
Իտալական լիր	2210.61
Ճափոնական եւեն	128.89
Շուեդական քրոն	10.3829
Նորվեգիական քրոն	8.823
Դանիական քրոն	8.483
Մէկ սթերլին	1.4155